

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 75ԳԴ-ՏԱՐԻ, ԹԻԻ 136 (21186) ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 21 ՕԳՈՍՏՈՍ 2002 10 ԷՁ

ԱՊՈՒ ՆԻՏԱԼ ԱՆՁՆԱՍՊԱՆ ԵՂԱԾ Է

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԹԱՐԵՔ ԱԶԻՁ

Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալիյի երկրպագուները հաստատեց մահը Ալու Նիտալի, յայտնելով, թե ան անձնասպան եղած է: Ալիյ ըստ, որ այսօր՝ Չորեքշաբթի, իրաքեան բարձրաստիճան պատասխանատուներ յատուկ ժողով մը պիտի գումարեն այս հարցով եւ բոլոր մանրամասնությունները պիտի հաղորդեն լրատուամիջոցներուն: Մինչ այդ երկրամբողջ օրը հակասական տեղեկություններ կը հաղորդուէին այս գծով: Ճաթի Յեղափոխական խորհուրդը կազմակերպութիւնը կը հաստատէր, որ իր ղեկավարը՝ Ալու Նիտալ ռոջ է, իսկ պաղեստինեան աղբիւրներ կ'ըսէին, որ ան սպաննուած է, երբ լուրջ հարցեր ունեցած է իրաքեան ապահովական մարմիններու հետ, որոնք վերջերս շատ այցելած են անոր բնակարանը:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ՀԱԼԷՊԻ ՄԷՁ ԸՆԴՈՒՆԵՑ Հ. Յ. Դ. ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Երէկ, 20 Օգոստոս 2002ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հ. Յ. Դ. Լիքանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան, Կեդրոնական Կոմիտէի անդամներ Յոյակ Թիւթէյեան եւ Ստեփան Տէր Պետրոսեան, ինչպէս նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, այցելեցին Սուրիական Արաբական Հանրապետութեան նախագահ Պաշշար Ասատի: Հանդիպումը տեղի ունեցաւ Հալէպի նախագահական պալատին մէջ: Շուրջ մէկուկէս ժամ տեւած եւ սիրալիր մթնոլորտի մէջ ընթացած հանդիպումին ընթացքին խօսակցութիւնները կեդրոնացան Սուրիոյ եւ Լիքանանի միջպետական եղբայրական յարաբերութիւններուն, երկու երկիրներուն վերաբերող եւ շրջանային հարցերուն վրայ: Նախագահ Ասատ դրուատիքով անդրադարձաւ լիքանանեանի խոսքին եւ իրերալաշարդ տարիներու ընթացքին անոր որդեգրած կեցուածքներուն: Տեսակցութեան ամառին նախագահ Ասատ ընդգծեց հանդիպումին եւ ընդհանրապէս տեղի ունեցած խորհրդակցութիւններուն օգտաշատութիւնն ու կարեւորութիւնը:


ՉԵՉԵՆԻՈՅ ՄԷՁ ԶԱԽՉԱԽՈՒՄԾ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՔՈՒՆ ԶՈՂՏՐՈՒՆ ԹԻՐ ԲԱՐՉՐԱՑԱՒ 100Ի

Նախանցեալ օր Չեչենիոյ մէջ ջախջախուած ռուսական «Մի. 16» ուղղաթիռին զոհերուն թիւը բարձրացաւ 100ի: Չախջախման պատճառին մասին հակասական տեղեկություններ կը շարունակուէին երէկ, երբ երեկոյեան, ռուսական պինտորական պաշտօնական աղբիւր մը հաղորդեց, որ ջախջախման վայրին մօտ գտնուած է «Սթրելա» տիպի հրթիռի մը հրթիռարձակ սարքը, ինչ որ ենթադրել կու տայ, թե ուղղաթիռը վար առնուած է հրթիռով մը: Առաջին իսկ պահէն, չեչեն ըմբոստներ հաղորդեցին, թե իրենք վար առած են 132 պինտոր փոխադրող ուղղաթիռը, սակայն ռուսական պինտորական աղբիւրներ մինչեւ երէկ երեկոյեան կ'ըսէին, թե ուղղաթիռը ինկած է պէտք եղածէն աւելի ծանրաբեռնուած ըլլալուն պատճառով, իսկ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը հաղորդէր, թե շարժակի խանգարում մը պատճառով է ջախջախումը: Յամենայնդէպս ցարդ պաշտօնական ոչինչ կը հաղորդուի եւ հետաքննութիւնը կը շարունակուի: Երէկ ջախջախման վայրը ժամանեց պաշտպանութեան նախարար Սերկէյ Իվանով՝ հետեւելու համար հետաքննութեանց, զորս պահանջած է նախագահ Վլատիմիր Փութին: Ան նաեւ վաղը՝ Հինգշաբթի երկրին տարածքին յայտարարած է այգային սուգի օր:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՔԱՇՈՒԵՑԱԻ ԲԵԹՂԵՂԵՄԷՆ, ՍԱԿԱՅՆ ՄԻԻՍ ԿՈՂՄԷ ՆԵՐԽՈՒԹԵՑ ԹՈՒԼՔԱՐՄ. ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՐԷԿ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵՑԱՆ

Իսրայէլեան ուժերուն Բեթղեղեմէն հեռանալէն քանի մը ժամ ետք, երկու պաղեստինցիներ եւ իսրայէլացի պինտոր մը սպաննուեցան Այալոթրոնանի եւ Կապալի մէջ: Երէկուան սպանությունները հարցականի տակ կ'առնեն Կիրակի երեկոյեան գոյացած համաձայնութիւնը, որ լուսաւետութիւն կը ներշնչէր ընդհանուր ու մնալուն պինադուլի մը մասին: Գոյացած համաձայնութիւնը մերժող Համաս, որ երդուած է շարունակել պինեալ պայքարը Իսրայէլի դէմ, իսրայէլացի պինտոր մը սպաննեց Կապալի հրեական բնակեցման վայրերէն մէկուն մուտքին: Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն Էլիապար պաղեստինեան իշխանութեան պահանջեց հակակշիռի տակ առնել կացութիւնը, այլապէս՝ իսրայէլեան բանակը գործի պիտի ձեռնարկէ: Իսրայէլացի պինտորին սպանումով վայրէջք ստացան պինտորներ սպաննեցին 15ամեայ պաղեստինցի մը, իսկ Թուրքարմի մէկ գաղթականը ներխուժող պինտորներ սպաննեցին պաղեստինցի մը, որ ըստ բանակին մէկ բանբերին՝ պինտուած էր ու իրենց վրայ կրակ բացած է: Յիշեալ միջադէպերէն քանի մը ժամ առաջ, իսրայէլեան բանակը Բեթղեղեմէն դուրս գալով՝ պաղեստինեան ուժերուն յանձնեց քաղաքը, որուն շուրջ, սակայն, կը մնան իսրայէլեան ուժերը: Բեթղեղեմ մէկն է Այալոթրոնանի եօթը զխաւոր քաղաքներէն, որոնք գրաւուած են իսրայէլեան բանակին կողմէ, իբրեւ հակադարձութիւն պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն դէմ: Իսրայէլի արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն՝ Մարք Սոֆէր ըսաւ, որ պաղեստինեան ապահովութեան ուժերէն կ'ակնկալուի լուրջ աշխատանք տանիլ սանձելու համար արմատական շարժումներն ու անոնց հետեւորդները, որոնք յարձակումներու կը ձեռնարկեն իսրայէլացիներուն դէմ: Սոֆէր աւելցուց, որ Բեթղեղեմը փորձաքարն է համաձայնութեան: Եթէ պաղեստինցիները յաջողին հակակշիռի տակ վախել կացութիւնը՝ արգիլելով յարձակումները, Իսրայի պիտի պարպէ նաեւ մնացեալ քաղաքները:

ԻՐԱՔԵԱՆ ԸՆԴՂԻՄԱՂԻՐ ԽՄԲԱԿ ՍԸ ԳՐԱԷՑ ՊԵՐԼԻՆԻ ՄԷՁ ԻՐԱՔԵԱՆ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԸ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԵՐՋ ԴՐԱՒ ԳՐԱՄԱՆ



Գերմանական յատուկ ուժերը կը պատրաստուին Գերմանիոյ դեսպանատունը

Իրաքեան ընդդիմադիր խմբակի մը հինգ անդամներ երէկ յարձակեցան եւ գրաւեցին Գերմանիոյ մայրաքաղաք Պերլինի մէջ իրաքեան դեսպանատունը, պատանդ բռնելով 10 հոգի, որոնց մէջ կային բարձրաստիճան պաշտօնատարներ: Դեսպանատուն յարձակումի ընթացքին թեթեւօրէն վիրաւորուած է երկու հոգի: Խմբակը կը կոչուի «Գերմանիոյ մէջ իրաքեան ժողովրդավար ընդդիմադրութիւն»: Համարուէն «Թոթրոլ» ուղարկուած ֆաքսի մը մէջ, խմբակը կը յայտնէր, թե կ'ուզէ Իրաքի մէջ իշխանափոխութիւն տեսնել, տապալելով Սադամ Հուսէյնի վարչակարգը: Գրաման գործողութեան շուրջ երեք ժամ ետք, գերմանական հակահարեկական յատուկ ջոկատ մը ներխուժեց դեսպանատուն, ձերբակալեց իսրայէլեան արարները եւ ապա արձակեց պատանդները: Գործողութիւնը տեւեց միայն հինգ վայրկեան: Ոստիկանութիւնը հաղորդեց, թե իսրայէլաւորները պինտուած էին:

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ՇԱՌԱՉՈՒՆ ԱՊՏԱԿ ՍԸ ՍՏԱՅԱՆ, ԵՐԲ ԻՐԱՔ ԲԱՑԱՒ ՄԹԵՐԱՆՈՅԻ ՍԸ ԴՈՆԵՐԸ, ՈՒՐ ԱՄԲԱՐՈՒՄԸ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՇԱՔԱՐ ԵՒ ԿԱԹ, ՄԻՆՉ ՈՒՇԻՆԿԹԸՆ ԶԱՅՆ ԿԸ ՆԿԱՏԵՐ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԶԵՆՔԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Իրաք միջազգային լրատու գործակալու՝ Թիւննեթու ներկայացուցիչներուն դիմաց բացառապէս միջերանցի մը, որը ամբարուած են մանուկներու կաթ եւ շաքար: Ըստ ամերիկեան մամուլի հաղորդած լուրերուն յիշեալ միջերանցը կը գործածուի կենսաբանական զէնքերու պատրաստութեան համար: Իրաքի առեւտուրի նախարար Մոհամէտ Մեհտի Սալէհ հանդիպում ունեցաւ Թիւննեթուներուն հետ, զորս առաջնորդեց Թաթի շրջանին մէջ գտնուող միջերանցը: Կենսաբանական ու թմրանյութերու փոխարէն լրագրողները գտան կաթ եւ շաքար, որոնք գնուած են Նեբրասկայի քարտէրի փոխարէն անդապիւստի ծրագրի շրջանակէն ներս: Սալէհ դատապարտեց ամերիկացիները, որոնք կը տարածեն անհիմն լուրեր, որոնց կարգին է երեխաներու կաթը զէնքերու վերածելու լուրը: Միւս կողմէ, քարտէրի ամերիկեան ընկերութիւններ, անցնող հինգ

ԹՈՒՐԵԱ ՊԱՏՐԱՍՏ Ե ԸՆԴՈՒՆԵՐՈՒ ԻՐԱՔԻ ԳԱՂԱԿԱՆՆԵՐ

Թուրքիա պատրաստ է գաղթականները հաստատելու Իրաքի հիւսիսային շրջաններուն մէջ, ապաստան տալու համար հազարավոր իրաքցիներու, որոնք փախուստ պիտի տան, երբ Պաղատան ենթարկուի ամերիկեան յարձակումի, յայտնեց Թրքական կարմիր Մահիկի մէկ պաշտօնատարը: Թուրքիա կ'ուզէ խու-

սփիլ 1991ի պատերազմին տեղի ունեցած զէնքերէն, որոնք պատճառ դարձան, որ Անգարա քննադատութեան ենթարկուի միջազգային գետնի վրայ: Օրին, Թուրքիա չէր կրցած արգիլել հարիւր հազարաւոր իրաքցի քերտերու հոսանքը զէնքի իր սահմանները, ուր հապտակով հաստատուած գաղթականները քառասուն վիճակ մը ստեղծած էին: Այսօր, Թուրքիա կ'առաջարկէ իր սահմանէն զէնքի հարաւ 15 քմ.ի վրայ ապագինեալ գետի մը հաստատել ու գաղթականները պատրաստել: Թուրքիա պատրաստ է կազմակերպուած ձեւով իրաքցիները ընդունելու նաեւ իր հողերուն վրայ: Թուրքիա անդամ Բուճէյթի քարտէրի նախարար յայտնեց, որ կազմակերպուած իրաքցիները պատրաստ է բարձրացընելու քարտէրի արտագրուածները, եթէ Միացեալ Նահանգները յարձակում գործեն Իրաքի վրայ՝ պատճառ դառնալով իրաքեան քարտէրի արտածման առկախման: (ՌՈՅԹԸԸ)

ԱՅԿԻԼAFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- At Home
- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՏՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԾԵԼՔ, Բ. ՅԱԿ ԳՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԷՖ. Փէ. Էլ. Փէ.ի բանտարկուած ղեկավար Անիէտ Սաատաթի եղբայրը՝ Մոհամէտ Սաատաթ երէկ սպաննուեցաւ իսրայէլացի պինտորներու կողմէ, Ռամալլայի մէջ: Չինտորները կը փորձէին ձերբակալել 23 տարեկան Սաատաթը, երբ ան խոյս տուած է, կոնակէն ստանալով քանի մը փամփուշտ:

ՊԱՍՊՏԱՅԻ ՄԵԶ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ԴԵՍՊԱՆ ԼԸ ՔՈՒՐԹԻ ԵՒ ՆԵՑԱՆ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ



Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէ երէկ Պապատայի պալատին մէջ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ տեսակցել էր...

Լը Քուրթիէ ըսաւ, որ նախագահ Լահուտի փոխանակել է Փարիզի գոհունակութիւնը՝ տնտեսական հարցերու լուծման ի խնդիր լիբանանեան պետութեան որդեգրած միջոցառումներուն համար...

Սյ ծիրիկն ըսաւ, որ նախագահ Լահուտի փոխանակել է Փարիզի գոհունակութիւնը՝ տնտեսական հարցերու լուծման ի խնդիր լիբանանեան պետութեան որդեգրած միջոցառումներուն համար...

«Նախագահ Լահուտի հետ քննարկումի նիւթ դարձաւ նաեւ գաղթականներու եւ մանուանդ Այն Շելուի գաղթականներն ներս տիրող վիճակը, եւ նախագահը այս վարձագումներուն մասին իր տեսակէտը ներկայացնել էր...

Լը Քուրթիէ ըսաւ, որ նախագահ Լահուտի հետ մանրամասնօրէն քննարկած է Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան Պէյրութի մէջ գումարելիք վեհաժողովի նախապատրաստութիւնները...

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցաւ իրանցի իր պաշտօնակիցին՝ Քամալ Խարապիի հետ...

Համմուտ երէկ կէսօրին նաեւ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիի:

●ԱՐՏԱՔԻՆ հարցերու խորհրդարանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Այի Խալիլ երէկ Դամասկոսի մէջ հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատտալի եւ խորհրդարանի նախագահ Ապտէլ Քատէր Քատտուրայի հետ:

Քննարկուեցան շրջանային վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանին եւ յատկապէս Պաղեստինի ու Իրաքի սպառնացող խրախիճեան եւ ամերիկեան նորանոր վտանգները:

●ԻՍՐԱԵԼԵԱՆ ուժեր երէկ սուրիական բռնազարուեալ Կոլանի իրենց դիրքերէն ուժաւորեցին հարաւի Նաքքար շրջանի Սատտանէ լեռը եւ Ռամթա բլուրը:

Իսրայէլեան օդուժը ուղղաթիւներով թռիչքներ կատարեց Մապաքէի Շրպապի, Քֆարշուպայի եւ Պուապաթ Հասանի վրայ:

Իսրայէլեան շրջուն ջոկատները նաեւ շարունակեցին Կապոյտ Գիծին կից գտնուող շրջաններուն խիստ հսկողութիւնը:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ՍՈՒՐԻԱ, ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԶԱՅԵՏ ԽԻԱՄԻ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, նախարարութեան ընդհանուր տնօրէն Չայէտ Խիամէի ընկերակցութեամբ այցելեց Սուրիա եւ տեսակցեցաւ Պասա Կուսակցութեան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու յատուկ գրասենեակի նախագահին՝ Մաժէտ Շուտուի հետ...



նացնելու եւ բարելաւելու համար պատասխանատու մարմիններուն պիտի տրուին մեծ կարելիութիւններ եւ դիւրութիւններ: «Միայն երիտասարդական միութիւններու միջեւ յարաբերութիւններով եւ համագործակցութեամբ է, որ երկու ժողովուրդները կր կամրջուի եւ կր լուծուի անոնց մօտ իշխող նախապաշարումները», ըսաւ Շուտու:

Նախարար Յովնանեան ներկայացուց լիբանանեան մօտեցումները երիտասարդական հարցերու գծով, ինչպէս նաեւ շեշտեց, որ Լիբանան կը ձգտի լիբանանցի եւ սուրիացի երիտասարդութեանց միջեւ ստեղծել երկխօսութեան առիթներ:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՐԻՄ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԼԱՍՏՆ Է

Կ'ԸՍԷ ՇԵՅՆ ԲԱՊԱԼԱՆ

Շիիններու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ Շէյխ Ապտէլ Ամիր Քապալան երէկ վերահաստատեց, որ ազգային միասնութիւնը բոլորիս փրկութեան լատու է եւ բոլորս պետք է անսանք Սատուժ մարգարէներուն՝ Յիսուսի եւ Մոհամէտի սիրով գոյր պատգամներուն: Շէյխ Քապալան պոլշացոց ինքնակամ, լարուած եւ այլամեր յարմարութեան:

թիւներէն եւ կոչ ուղղեց դասեր քաղելու անցեալի տառապանքներէն, երբ Լիբանան կորսնցուց բազմաթիւ երիտասարդներ եւ կրեց նիւթական շատ մեծ վնասներ, իսկ անոր վերականգնումին համար անհրաժեշտ է բոլորիս միացում ձգել:

«Այս օրերուն թշնամին մեր սահմանին կանգնած դարանակալ կը սպասէ, հետեւաբար անհրաժեշտ է, որ վանեք ամէն ներքին հարց. նաեւ պետք է վերահաստատեք, որ ինչն էնք համայնքային խմբաւորումներուն եւ ապահովական կոչիւնե-

ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐՈՒԵՑԱՒ

Լատտեաղական լրատուութեան հաստատութիւններու համադաշնակցութիւնը երէկ ձայնասփիւռի «Սաուր Լուպան» կայանին մէջ գումարեց ժողով մը, որուն ներկայ գտնուեցան լիբանանեան պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի բոլոր կայաններէն ներկայացուցիչներ:

ժողովէն բխեցաւ հաղորդագրութիւն մը, որուն մէջ լատտեաղական լրատուութեան հաստատութիւններու համադաշնակցութիւնը շեշտեց տիրող համագործակցութիւնը եւ այդ սերտ գործակցութեան շարունակման անհրաժեշտութիւնը, դիմադրելով բոլոր ճնշումներուն:

Հաղորդագրութիւնը պահանջեց, որ տեղեկատուութեան կանոնադրէն շնչուին բոլոր այն յօդուածները, որոնց հիմամբ կրնայ լրատու կայան մը փակուիլ, կամ լրագրող մը բնատարկուիլ որպէսզի մշտական սպառնալիքի ենթակայ չմնան Լիբանանի մէջ տեղեկատուութեան մարդի վայելած ապատութիւնները:

Համադաշնակցութիւնը որոշեց նաեւ օրագիր մը մշակել եւ վայն պատկան մարմիններուն՝ հաղորդակցութեան հարցերու եւ տեղեկատուութեան նախարարութիւններուն փոխանցել, ինչպէսզի լատտեաղական լրատուութեան մարդի կարիքները եւ պահանջել պետութեան հոգատարութիւնն ու պաշտպանութիւնը:

Համադաշնակցութիւնը որոշեց նաեւ իր ժողովները աւելի լաճախակի դարձնել՝ հետապնդելու համար վերոնշեալ որոշումներու գործադրութեան աշխատանքն ու լատտեաղական լրատուութեան մարդի ընթացքը, մինչեւ կատարուին բոլոր պահանջները եւ նշեալ մարդը բարգաւաճի, ինչպէս նաեւ խօսքի եւ միտքերու ապատութիւնները յարգուին իրենց բոլոր կողմերով:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՏԻԿԱՆ ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՉԸ ԵՒ Հ.Բ.Ս.Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ

Երէկ առաւօտ, 20 Օգոստոս 2002ին, Արամ Ա. կաթողիկոս մայրավանքին մէջ ընդունեց Կատիկանի միջեկեղեցական յարաբերութեան բաժանմունքի պատասխանատու Մաճ Եպիսկոպոսը, որ Ուղղափառ Եկեղեցիներու հետ կապի պատասխանատուն է նոյն բաժանմունքին մէջ: Սոյն հանդիպումը առիթ մը եղաւ ընդհանուր վերաբերման երկարակից Ուղղափառ Եկեղեցիներուն հետ յարաբերութեան ներկայիս հանգրուանը: Վեհափառ կարտերակցութեան ընդգծեց միջեկեղեցական յարաբերութիւնը գործակցութեամբ թարգմանելու անհրաժեշտութիւնը:

Այս վեհափառ ընդունեց Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ Պերկ Սեդրակեանը եւ փոխ նախագահ Սարգիս Տեմիրճեանը: Աւելի քան ժամ մը տեւած հանդիպման ընթացքին արժարձուեցան հայ կեանքի պանակալ երեսներուն առնչուած շարք մը հարցեր:

Advertisement for Khabbaz-Orient Plus Travel & Tourism, featuring Varna packages starting from 350\$. Includes details about Cyprus, Greece, and other travel options.

ԿԸ ՓՆՏՈՒՄ

●Ողդեգրուած ընտանիքի մը աղջիկն էմ, ծնած՝ 11 Մայիս 1970, CMC հիւանդանոցը: Կը փնտնեն ծնողքս եւ ինձնէ մեծ քոյրերս եւ եղբայրներս (Պուրճ Համուտէ): Հեռ. 01 - 258308, երեկոյեան ժամը 8:00էն 10:00:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Ջարտուղարուի մը, որ տիրապետէ անգլերէն եւ արաբերէն լեզուներուն, ինչպէս նաեւ գիտնայ համակարգիչ գործածել: Կը խնդրուի CV-ին ուղարկել fax-ի հետեւեալ թիւին՝ 04-712301:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Ոսկերչական մոմի վրայ աշխատող փորձառու օրհոր մը: Դիմել՝ հեռ. 03-375724:

Advertisement for BALKAN Holidays Varna, offering a 295 \$ package for 4 people including accommodation, food, and transport.

Advertisement for Studio Lantern, offering video production services for 01-266866 or 03-695399.

Advertisement for Khabbaz-Orient Plus, offering travel packages starting from 350\$.

Advertisement for Varna packages, offering starting from 350\$.

Advertisement for Balkan Holidays Varna, offering a 295 \$ package for 4 people.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԼԻԿԱՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ՄՏԱՀՈԳ՝ Ի ՏԵՍ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐՈՒ

Լիբանանի քրիստոնեայ լիկաներու համախմբումը երէկ գումարած իր ժողովէն ետք հրապարակուած հաղորդագրութեամբ մտահոգութիւն յայտնեց պաղեստինեան զաղթականներէն ներս եւ լիբանանեան այլ շրջաններու մէջ ապահովութեան խախտումներուն եւ զինեալ բախումներուն համար, զարմանք յայտնելով կարգ մը հոսանքներու զինեալ սանձարձակութեան ի տես: «Ատենը եկած է տալու լիբանանեան քաղաքական մեծ որոշում՝ հայրենի հողի ամբողջութեան վրայ տարածելու միայն օրինական ապահովութեան վրայ, որպէսզի պետութիւնը ստանձնէ բոլորին զէնքերը», կ'ըսէ հաղորդագրութիւնը:

Հաղորդագրութիւնը նկատել տուաւ, որ հանրային կարծիքը ունի այն տպաւորութիւնը, թէ քրիստոնեաներու պառակտումները կը շարունակուին եւ անոնց վատաբերող այս վիճակը պատճառ կը դառնայ ազգային զենքի վրայ հաւասարակշռութեան խախտումին:

Հաղորդագրութիւնը կոչ ուղղեց հանդարտ երկխօսութեամբ ամրապնդելու ազգային միասնութիւնը, որպէսզի կարենանք դիմագրաւել մարտահրաւէրները:

ՄԻՇՏ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՄ ԸԵՌՈՒ ՄՆԱԼ ՊԼՈՔՆԵՐԻ

Կ'ԸՍԵ ՓՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՍԱՄ ՖԱՐԵՍ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս «Շարքէլ Աուսաթ» օրաթերթին մէջ տրուած հարցազրոյցի մը մէջ ընդգծեց, որ «ընդունելի չէ անհատներու փոխանցել սահմանադրական հաստատութիւններու լիազօրութիւնները, որովհետեւ նախագահ զօր. Էմիլ Լահուտ պետութեան եւ բոլոր լիբանանցիներուն նախագահն է, եւ ո՛չ միայն քրիստոնեաներու նախագահը. Նեպիի Պրըրի բոլոր համայնքներն ու հոսանքները համախմբող խորհրդարանի նախագահն է, եւ շիիներու ներկայացուցիչը չէ միայն. իսկ վարչապետ Ռաֆիք Հարիրի տարբեր համայնքներէ եւ հոսանքներէ եկած նախարարներու խորհուրդի նախագահն է, եւ ոչ միայն սիւնիներու ներկայացուցիչը»:

սկսելիս ի վեր նախընտրած եւ հետո մնալ պլոքներէն եւ համախմբումներէն, որպէսզի ըլլաւ միջին եզրի եւ համախոհութեան ազդակ, նաեւ որպէսզի պահպանուէր ապատութիւնս եւ անկախութիւնս», ըսաւ ան:

Ֆարէս յիշեցուց, որ փոխ վարչապետի պաշտօնը գոյութիւն ունեցած է երեսունական տարիներէն ի վեր եւ երկրին մէջ իրարու յաջորդած կառավարութիւններու կազմերուն մէջ, ուստի անհրաժեշտ է սահմանադրականօրէն ճշդել անոր իրաւասութիւնները, առաջըր առնելու համար հանրապետութեան նախագահի եւ վարչապետի միաժամանակ բացակայութեան պարագային ստեղծուելիք պարագային:

ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՄԵՆՏԻՔԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԿԸ ՄՆԱՅ Ի ԶՕՐՈՒ

Երկաթուղագիծերու եւ հանրային փոխադրամիջոցներու վարչութեանց աշխատակողմներու եւ պաշտօնեաներու սենտիքաներու յայտարարած եւ աջօր սկսող բաց գործադուլը կանխարգելելու ճիգերը արդիւնաւորուած չեն եւ գործադուլը կը մնայ ի գորու, յայտարարեցին լրատուական աղբիւրները: Սենտիքաներու ներկայացուցիչները երէկ կէսօրէ առաջ դրական հանդիպում մը ունեցած էին, փոխարգելիչներու եւ հանրօգուտ շինութեանց նախարար

Նաթիպ Միքաթիի հետ, բայց յետմիջօրէին ելեւձուտքի նախարար Ֆուատ Սինիորայի հետ անոնց ունեցած տեսակցութիւնը սպասուած արդիւնք չէ տուած: Աշխատակողմները շարունակելով համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղսըն գլխաւորեց նախարարներուն այցելած երկու սենտիքաներու միացեալ պատուիրակութիւնը: Լրատու միջոցները աշխատակողմներէն քաղելով իրենց տեղեկութիւնները հաղորդեցին, որ Սինիորայի հետ հան-

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

20 Օգոստոսի լիբանանեան թերթերը իրենց առաջին էջով լուսարձակի տակ առած են պաղեստինեան պայքարի ամէնէն արմատական ղեկավարներէն՝ Ապու Նիտայի մահը, պաղեստինեան իշխանութեան եւ Իսրայէլի միջեւ գոյացած համաձայնութիւնը եւ «Մի. Էն. Էն.» կայանին կողմէ «Քալիտա»ի կատարած պինավարժութիւններու տեսարկի ցուցադրութիւնը: Առաջին էջով թերթերը նաեւ անդրադարձած են լիբանանեան քաղաքական ներքին կեանքը լուրջ պնդման հարցերու:

«Նահար» գրած է. «Պաղեստինեան պինտրական ղեկավար Ապու Նիտայի սպանութեան լուրը տակաւին չէ ստուգուած. պաղեստինցի ղեկավարներ Ռամալլայէն եւ Այն Հելուէէն տարբեր մեկնաբանութիւններ կու տան այս մասին»:

«Տիար»ի համաձայն, Իրաքի մայրաքաղաքին մէջ Ապու Նիտայ մեռած գտնուեցաւ խորհրդատր պայմաններու մէջ. պաղեստինեան կարգ մը աղբիւրներ հաւանական կը նկատեն անոր անձնասպանութիւնը:

«Սաֆիր» նշած է, թէ Ռաշիդկըն դարձեալ Իրաքը կը կապէ ահաբեկչական գործողութիւններուն, իսկ Իսրայէլ լուր կը մնայ. Ապու Նիտայ անձնասպան եղաւ, սպանուեցաւ, թէ դարձեալ անհետացաւ:

«Անուար»ի համաձայն, պաղեստինեան աղբիւրներ տեղեկացուցած են, թէ Ապու Նիտայ Պաղեստին մէջ փանփուշտով սպանուած է:

Թերթերը գրած են, թէ ամերիկեան «Մի. Էն. Էն.» կայանը հին վիտէօ երիպներու շարք մը ցոյց տուաւ Պըն Լատէնի պինեալներուն մարկուսին մասին. երիպներէն մէկը ցոյց կու տայ թունաւոր կապերու փորձարկումը շուներու վրայ: Ըստ թերթերուն, այս պինավարժութիւնները կը ներկայացնեն 11 Սեպտեմբերէն առաջ եղած փորձերը:

Պաղեստինեան հարցին մասին «Քիֆաի Արապի» գրած է, թէ Կիրակի օր իսրայէլացիներու եւ պաղեստինցիներու միջեւ կայացած ապահովական համաձայնութիւնը կրնայ որեւէ ժամու փուլ գալ. պաղեստինցի շատ մը շարժումներ կը մերժեն համաձայնութեան կէտերը, իսկ թէ՛ Ալի կը նսեմացնէ անոր կարեւորութիւնը:

Ըստ «Անուար»ի, պաղեստինեան շարժումներ կը մերժեն ապահովական համաձայնութիւնը. իսրայէլացի պինտրները Բեթղեհէմէն քաջուեցան եւ պաղեստինցի պինեալներ մուտք գործեցին քաղաք:

«Սաֆիր» այս մասին գրած է, թէ հակառակ պաղեստինեան շարժումներու մերժումին եւ իսրայէլացի նախարարներու կասկածին, իշխանութիւնը կ'ենթարկուի «Կապա - Բեթղեհէմ» առաջին անգամի քննութեան:

«Տիար»ի համաձայն, Աքսայի նահատակները յայտարարած են, թէ պիտի շարունակեն ընդդիմութիւնը ամէն տեղ:

Միջազգային այլ իրադարձութիւններու մասին «Նահար» գրած է, թէ ձորձ Պուշ կրնայ յետաձգել Սատամ Հիւսէյնը վար առնելու ծրագիրը եւ բաւականա՛նալ անոր պինտրական ուժը ոչնչացնելով:

Ըստ «Պայրաք»ի, Սէուտական Արաբիա կը պզուցանէ, թէ պատերապմը պիտի խախտէ շրջանային եւ միջազգային խաղաղութիւնը եւ մարդկային մեծ աղէտներու պատճառ պիտի ըլլալ:

«Տիար» նշած է, թէ Իսրայէլ «Էֆ. 16» տիպի օդանաւեր պիտի գործածէ հիւլեական յարձակումի համար, իսկ Ամերիկա առանց աղմուկ բարձրացնելու՝ պէնքեր կը կուտակէ շրջանին մէջ:

«Անուար»ի համաձայն, սուրիացի քաղաքական մեկնաբան մը կ'ըսէ, որ Միացեալ Նահանգներու հիմնական նպատակն է Միջին Արեւելքի քաղաքական քարտէսի փոփոխութիւնը՝ ի գին մեծ քանդումներու եւ մեծաթիւ պոհերու:

Տեղական իրադարձութիւններու մասին «Նահար» գրած է, թէ Կորվար Միշէլ Աուս յայտարարեց. «Ես արտաքին որեւէ ուժի չորակցութիւնը չեմ փնտրեր, իսկ ամերիկեան Քոնկրէսին ներկայացուելիք բանաձեւը պարզապէս իմ կեցուածքներս կ'ամրապնդէ»:

«Պայրաք»ի համաձայն, պինտրական պատասխանատու մը կ'ըսէ, որ բանակին հրահանգուած է «Տընսիէի խմբակին» անդամները ձերբակալել՝ հապի անոնց դուրս գան Այն Հելուէի գաղթականներէն: Ըստ թերթին, Քըրնէթ Շահուանի անդամները Ռալիտ Ժոմպլաթի եւ այլ ուժերու բազմաթիւ կը շոջափեն՝ երկխօսու-

Շար.՝ էջ 10

Panasonic
13 Models to choose from

DVD HOME THEATER SYSTEMS
That just fit for you!

DVD-RV32 DVD-V Player, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3 Dolby Digital \$200	DVD-XV10 DVD-V Player, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3 DTS / Dolby Digital \$280	DVD-CV52 5 DVD-V Changer, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3 DTS / Dolby Digital \$280
DVD-RA61 DVD-AV Player, VCD / CD / CD-R/RW / MP3 DTS / Dolby Digital 5.1 \$465	DVD-RA71 DVD-AV Player, VCD / CD / CD-R/RW / MP3 DTS / Dolby Digital 5.1 \$510	DVD-PV40 Portable DVD-V Player VCD / CD / CD-R/RW / MP3 Dolby Digital \$425
DVD-LV60 Portable DVD-V Player VCD / CD / CD-R/RW / MP3 Dolby Digital \$925	DVD-LA95 Portable DVD-AV Player VCD / CD / CD-R/RW / MP3 DTS / Dolby Digital \$1,200	

For more info: Tutunian Corp. S.A. (0417)12129/130. 711967 (03)243203 Fax: (0417)12177 E-mail: TTC@cyberia.net.lb

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՐԴ ՀԱԻԱՔ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՐԴ ՀԱԻԱՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Համազգայինի Ուսանողական Համախմբումը, որ սկիզբ առած էր Լիրանանի և շարունակում էր 7 տարի, այս տարի առաջին անգամ ըլլալով կազմակերպվեց Հայաստանի մէջ, մասնակցութեամբ 65 ուսանողներու, որոնք եկած էին աշխուհի զանազան երկրներէն՝ Միացեալ Նահանգներ, Քանադա, Անգլիա, Ֆրանսա, Յունաստան, Սուրիա, Լիբանան և Իրան:



- Ճէյմս Ռաշը

1. «Հայաստան՝ առասպելաբանութեան միջնաբերդը, քրիստոնէութիւն, Հալոլուցի բուր, դիւցազնական կերպարներ»
2. «Հայաստան գտնուած գանձեր, նարեկացիի աղօթագիրքը եւ խորհուրդ»

- Լեւոն Սարաշեան

1. «Հայաստան եւ Ղարաբաղ 1988էն մինչեւ 1994»
2. «Հայաստան եւ Ղարաբաղ 1995էն մինչեւ 2002»

- Երանդ Սարգսեան

1. Աշխատածողով (Ուրբախ) «Հայ երիտասարդութեան վերաբերող հարցեր եւ անոր ներդրումը ազգային կեանքին մէջ»
2. Աշխատածողով (Ուրբախ) «Երկար վարութիւն, ծրագրում, գործունէութիւն»

Համախմբումին հիմնական նպատակն էր աշխարհացրիւ հայ ուսանողները մէկտեղել, գիրար ծանօթացնել, եւ որ ամէնէն կարեւորն է, անոնց մէջ արթնցնել հայութեան ոգին եւ ծանօթացնել հայկական մշակույթը:

Յուլիս 13էն 27 երկարող օրերուն ուսանողները ապրեցան հիացումի եւ սքանչացումի պահեր: Հայրենի հողը անտարակոյս իր ներգործօն ազդեցութիւնը ունեցաւ անոնց ներաշխարհին վրայ:

Ուսանողներուն մեծամասնութիւնը առաջին անգամ ըլլալով կ'այցելէր հայրենիք:

Ուսանողական հասքին իր ողջունի խօսքը ուղղեց նաեւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան (խօսքը կու տանք կողքի սիւնակով):

Ուսանողներու համար նախօրօք ծրագրուած էր բազմակողմանի յայտագիր, որ կ'ընդգրկէր դասախօսութիւններ, այցելութիւններ, պտոյտներ, տեսարժան վայրեր, ուրախ ժամանց, այցելութիւն բանակային պարտաւարներու մը, որ մեծ ապաւորութիւն ձգած է ուսանողներուն մտքին մէջ եւ այլն:

Դասախօսական կազմին մէջ նկատի առնուած էին մասնագէտներ եւ անուանի մտաւորականներ: Կը ներկայացնենք դասախօսներու եւ անոնց տուած դասախօսութիւններուն ցանկը:

- Լեւոն Սկրտչեան

«Հայ երիտասարդութեան խորհուրդ»



թեան խնդիրները եւ վաղուց օրը»

- Լեւոն Չուգասեան

«Մատենադարանի գանձերը 6էն 17րդ դարերուն»

- Արուսեակ Սահակեան

«Հայկական ծեսեր եւ աւանդութիւններ, Սասունցի Դաւիթ, Լորկէ Շիրիսանի հարսանիք, հայկական պար»

- Րաֆֆի Յովհաննեսեան

«Հայաստան քաղաքական հեռանկարներ եւ 21րդ դարու մար-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ

Ուսանողական Ֆորումին, Ողջունում եմ Համազգային Հայ կրթական եւ Մշակութային Միութեան ուսանողական ֆորումի մասնակիցներին եւ կազմակերպիչներին:

Ուրախացալի ե, որ տարիների աւանդոյթ ունեցող ուսանողական ֆորումն առաջին անգամ հրաւիրում է հայրենիքում եւ դրանով ստանում առանձնայատուկ նշանակութիւն: Սա աշխարհի տարբեր երկրներում ուսանող սփիւռքահայ համալսարանականներին համախմբելու, նրանց մեր ազգային արմատներին ու ժառանգութեանը հաղորդակից դարձնելու հրաշալի միջոց է:

Այսօր, երբ ստեղծուած են Հայրենիք - Սփիւռք յարաբերութիւնների խորացման ու զարգացման բարենպաստ պայմաններ, մենք խիստ կարեւորում ենք յատկապէս երիտասարդական եւ ուսանողական շրջանակներին փոխհարստացնող շփումներն ու համագործակցութիւնը: Այսօրուան արդիւնաւետ աշխատանքը մեծ չափով կանխորոշելու է վաղուան մեր գաղթօճակների ազգային եւ մտաւոր դիմագիծը:

Միեւնի՝ ուսանողներ, համոզուած եմ, որ հաւաքի ընթացքում հնչելիք դասախօսութիւնները, ձեր այցելութիւնները Հայաստանի պատմական ու մշակութային վայրեր գեղեցիկ առիթներ կը լինեն ձեր նախնիների երկիրը նոր աչքերով տեսնելու եւ նորովի բացայայտելու համար: Իմ ցանկութիւնն է, որ այս հաւատքը զօրացնի հայ ժողովրդի արժանաւոր մտաւորականը դառնալու ձեր մղումը:

Ուսանողական ֆորումի բոլոր մասնակիցներին մաղթում եմ, որ առաւելագոյն օգտագործեն հաւաքի ընթացքում հնարաւորութիւնները եւ իրենց կրթօճակները վերադառնան վառ տպաւորութիւններով ու հայրենիքի շնչով լիցքաւորուած:

ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ

Երեւան, 12 Յուլիս 2002

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԱՐՈՒՄԷՆ

«Երեւանը եւ Հայաստանը հակասական տպաւորութիւններ կը յառաջացնեն, բայց հիմնականը դրական տպաւորութիւններն են: Իւրաքանչիւր այցելու նոր բարեխաւածներ կը նկատեն, հինգ տարի առաջ ժողովուրդը բաւական յուսախաբ էր եւ չէր տեսներ իր ապագան»:

ՍԵՊՈՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Միացեալ Նահանգներ

«Ես այլեւս Փարիզի բնակչուհի չեմ պատկերացըներ ինքզինքս: Չեմ գիտեր թէ կրնամ մ'այլեւս առանց հայրենիքի ապրիլ»:

«Ձգացի, որ տունս հոս է՝ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ֆիզիքական իմաստով»:

ԼՈՐԻԿ ՊԵՂՏՍՅԱՆԵԱՆ

Փարիզ

«Ամէնէն գրաւիչը մեր հայրենիքին բնութիւնն է: Ես վստահ եմ, որ Սփիւռքի ու Հայրենիքի ուժերուն միաւորումը արագօրէն կը գտնուի զարգացման ճամբան»:

ԵՏՈՒԲՏ ՄԻՐՁԱԽԱՆԵԱՆ

Թեհրան

«Յուզիչ է երիտասարդական հաւաքը, որովհետեւ պատկանելիութեան զգացում մը կը ստեղծէ մէջդ: Ամէնքս ալ կարծես նոյն մակարդակը ունինք, քանի աճ կը վերջանայ «եան»ով: Մեզմէ շատեր ծնած են Ամերիկա, ուրիշներ՝ Լիբանան, եւ կամ աշխարհի չորս կողմերը, բայց բոլորս կը միանանք մէկ ազգի եւ մէկ մշակութի արժեքի յայտարարին տակ, որն է Հայաստանը»:

ՄԱՐԻ ՆԱՃԱՐԵԱՆ

Յունաստան

ԿՈՒՉԵՍ ԶԱՐՈՒՆԱԿԵԼ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԴ Արձանագրուէ՛

ՓՕԼԻԿԼՕԹ
ԹԵՐՆԻՔԸ ԶՈԼԵՃԻ

Մասնագիտութիւն (T. S., B. A.) գոյգ վկայականներ

- Որակաւոր ուսուցչակազմ
- Լիբանանեան միջազգային ճանաչուած վկայականներ (T. S., B. A.)
- Մատչելի կրթաթրջակ եւ վճարման դիւրութիւն
- Առաւելու եւ երկրորդական դասընթաց

POLYGLOT - Տորա: 251320
Տեր եւ տնօրէն ՊԵՏՐՈՍ ՇԵՍՏԵԱՆ

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻՆ ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Հայաստանի կառավարութիւնը իր 15 Օգոստոսի նիստին հաստատած է Հայաստանի եւ Արարական Միացեալ Էմիրութիւններու առողջապահութեան նախարարութիւններուն միջեւ առողջապահութեան եւ բժշկագիտութեան մարզին մէջ համագործակցութեան մասին համաձայնագիրը, որ ստորագրուած էր 20 Ապրիլին՝ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի Ապու Տապի կատարած այցելութեան ընթացքին:

Հայաստանի առողջապահութեան նախարար Արարատ Մկրտչեան համաձայնագիրին դրոյթները մասնաւորապէս նշեց, որ անոնք կը վերաբերին երկու երկրներուն մէջ համաճարակային իրավիճակի վերաբերեալ տեղեկատուութեան եւ քստրերու փոխանակման:

Ա. Մկրտչեան յայտնեց, որ Արարական Միացեալ Էմիրութիւնները ունին որակաւոր բժիշկներու մեծ պահանջ, որ կրնայ բաւարարուիլ նաեւ Հայաստանի մասնագէտներուն միջոցով:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան 14 Օգոստոսին հանդիպում մը ունեցած է Միջին Արեւելքի մէջ Լեւոնային Ղարաբաղի մնայուն ներկայացուցիչ Կարօ Քէպապեանի, Տեղեկատուական Արհեստագիտութիւններու Հիմնադրամի գործադիր տնօրէն Գաբրիլ Շուկազեանի (Հայաստան) եւ լիբանանահայ արուեստաբան դոկտ. Մովսէս Հերկեւեանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են Արցախի մէջ ժամանակակից տեղեկատուական արհեստագիտութիւններու ներմուծման հետ կապուած հարցեր:

Գ. Շուկազեան ներկայացուցած է իր հիմնադրամին կողմէ մշակուած Արցախի մէջ կրթական միջավայրի նորամուծութեան եւ միասնական տեղեկատուական տարածութեան ստեղծման ռազմավարական ծրագիրը:

Հանդիպման մասնակիցները ընդգծած են հայկական Սփիւռքի միջոցներուն օգտագործման անհրաժեշտութիւնը Արցախի մտաւոր ներուժի զարգացման միտող նախագիծներու իրագործման մէջ:

Ա. Ղուկասեան պատրաստակամութիւն յայտնած է աջակցութիւն ցուցաբերել Լեւոնային Ղարաբաղի մէջ նմանատիպ նախագիծներուն իրականացման աշխատանքներուն:

ՅԱԿՈՒ ՇԻՐՎԱՆԵԱՆ՝ ՎԵՐՍՏԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐՈՒ ԱՐՏՕՆԱԳԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ

Վերջերս Քալիֆորնիոյ նահանգապետ Կրէյ Տէյվիսի կողմէ Քալիֆորնիոյ կապալաւորներու արտօնագիրներու խորհուրդի անդամ վերընտրուած է ամերիկահայ ծանօթ գործարար Յակոբ Շիրվանեանը, որ արդէն 30 տարի է ի վեր կ'աշխատակցի այս կազմակերպութեան: Նշեց, որ Յակոբ Շիրվանեան միակ հայ անդամն է խորհուրդին մէջ: խորհուրդին առաջնութիւնն է պահպանել հանրութեան առողջութիւնը, անվտանգութիւնն ու բարօրութիւնը՝ վերահսկելով շէնքերու կառուցման գործընթացը:

Գործարարական ծրագիրներուն զուգահեռ, Յակոբ Շիրվանեան աշխուժ մասնակցութիւն կը բերէ Քալիֆորնիոյ հայկական ծրագիրներուն, ինչպէս նաեւ կ'աջակցի Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի շինարարական ծրագիրներուն:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ՝ ԱՄԵՐԻԿԱԿԱԶՅ ԳԱՂՈՒԹԷՆ

● ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ մասնաճիւղին «Մարդարապատ» պարսխումբին տարեկան երոյթը տեղի ունեցած է 9 Յունիսին, Երեւանի հիւսիսային արևմտյան կողմէն Վերնոն Հիլզի գիւղապետական հանդիսարանին մէջ, աւելի քան երեք հարիւր հանդիսականներու ներկայութեամբ: Մտաւորապէս տարի մը տքնալան աշխատանքներէ ետք 8էն 16 տարեկան պատանիներէ բաղկացած պարսխումբը յաղով կերպով ներկայացուցած է 24 պարեր:

● Հ. Օ. ՄԻՈՒԹԵԱՆ Արեւելեան Միացեալ Նահանգներու 82րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցած է 18 Յունիսէն 21 Յունիս նիւ ձերգիի մէջ: Ժողովին ընթացքին քննարկուած են ՀՕՄԻ Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային վարչութեան 2001-2002 տարեշրջանին տարած աշխատանքները ու ծրագիրները, ինչպէս նաեւ ընտրուած է նոր Երջանային վարչութիւնը:

ՀՕՄԻ Արեւելեան Միացեալ Նահանգներու Պատգամաւորական ժողովը որդեգրեց բանաձեւերու շարք մը՝ Հայաստանի, Արցախի եւ Միացեալ Նահանգներու մէջ իրագործուելիք ընկերային, բարեփրակային, առողջապահական եւ այլ ծրագիրներուն մասին:

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶՄԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ONE SECOND IS ENOUGH...
Արկածը կը Պատահէ Երկվայրկեանի Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՐՔ ՆԵՐԿԱՅ ԵՐԵ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՅՐԿԱՆ.

ԱՏՀԻԼ AFHIL

ԱՖիլտի ԸԼՆԸ, Բ. Յարկ, Գեո. Եւ Ճարտ. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Միջապալին Քաղաքական Կեանք

ԻՐԱՔ. ՎԵՐՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԸ

«Պիտի պահեն բոլոր պալլեմոտրանք-ներս: Պիտի պահեն գառնոք անմիջապակ հասողութեան սահմաններում մէջ: Սատտամ Հիւսէյն պետք է հասկը-նայ, որ ես լուրջ եմ մեր երկիրը պաշտպանելու հարցում մէջ»:

ՃՈՐՃ ՏԱՊԵԼԵՆԻ ՊՈՒՇԵ

Պուշ չի հասկնար հետեւեալ երկու կէ-տերը: Առաջին, որ քարիւղի պահեստներ եւ քարիւղի շահեր պաշտպանելը երկիր պաշտպանել չէ, եւ երկրորդ, շատ հաւա-նաբար Սատտամ Հիւսէյն եւս նոյնքան լուրջ է իր երկիրը պաշտպանելու հարցին մէջ: Սակայն ասոնք անշուշտ կարելու չեն քառալոյ ճորճին համար: Ուաշինկ-թըն Տի. Սի. ի մէջ պատերազմի ջատա-գովներուն բոլոր հատուածները իրաքի դէմ առաւելագոյն ուժգնութեամբ պա-տերազմ մը կը պահանջեն այս տարի: Անգամ մը եւս իբրեւ պատրուակ պիտի օգտագործուի ՄԱԿի զէնքերու քննու-թեան ձեւակերպութիւնը: Հարկ է յիշել, որ վերջին անգամ, երբ զէնքի քննիչները իրաք մտնելու արտո-նութիւն ստացան, անոք վտարուեցան անկէ, որով-հետեւ անոնց մեծ մասը Մի. Այ. է. ի հաշուոյն կ'աշ-խատէր եւ տեղեկութիւններ հաւաքելով կը փոխան-ցէր բրիտանական եւ ամերիկեան ուժերուն, որոնք գրեթէ ամէն շաբաթ կը ուժգնորէին իրաքը: Այս ան-գամ կ'ակնկալուի, որ քննութեան պահանջները այն-քան խիստ ըլլան, որ իրաքի կառավարութիւնը չկա-րենայ համաձայնիլ անոնց: Բրիտանական «Տը կարտիքը» թերթին 14 Փետրուար 2002ի թիւին մէջ ամերիկեան գաղտնի սպասարկութեան անանուն աղ-բերւմ մը նշած է, որ՝ «Սպիտակ Տունը այնպէս պիտի ընէ, որ այդ պատասխան չստանայ [իրաքէն]»: Ասի-կա կը նշանակէ, որ պատերազմի ջատագովները պի-տի գրգռեն այնպիսի տագնապ մը, որ Միացեալ Նա-հանգներուն համար յարմար դրդապատճառները ստեղծէ պատերազմ յայտարարելու:



Իրաքի կամաւոր օրիորդ մը կը տողանցէ Պաղատի մէջ

րի իրենց համաձայնութիւնները: Ամերիկեան եւ բրիտանական կառավարութիւննե-րը գիտեն, որ իրաքի մէջ իրենց ռազմավարական եւ տնտեսական նպատակները իրականացնելու միակ միջոցը իրաքի դէմ արշաւել, Սատտամի կառավարու-թիւնը վար առնել եւ Ուաշինկթընի հրահանգները գործադրող նոր վարչակարգ մը մէջ տեղ բերելն է: Պայման չէ, որ ժողովրդավարական վարչակարգ ըլլայ, հաւանական ալ չէ, որ այդպէս ըլլայ: Միայն պէտք է այնպէս ընէ, որ իրաքի քարիւղի հանքերը ամերիկեան եւ բրիտանական քարիւղի հսկաներուն հակակշիռին տակ ըլլան: Այս նպատակը իրագործե-լու համար Փենթագոն եւ անոր քաղաքային գործա-կիցները Սպիտակ Տան եւ Բոնկրէսի մէջ պատրաստ են գրաւելու եւ կառավարելու իրաքը՝ մինչեւ յար-մար կառավարութեան մը կազմութիւնը: Մարդկա-յին իրաւունքները:

Հակառակ Պուշի շրջանակներուն մէջ Սատտամ Հիւսէյնի ժողովրդականութիւնը չվայելելուն, Պաղես-տինի, Յորդանանի եւ միջին արեւելեան եւ իսլամա-կան այլ պետութիւններուն մէջ շատեր կան, որ զայն կը սիրեն: Ոչ թէ որովհետեւ ան արդար է իր ժողո-վուրդին հետ կամ անոնց ամէնօրեայ հարցերը լու-ծելու յատուկ ծրագիր մը ունի, այլ՝ որովհետեւ ան դէմ կը ընէ հսկայ Միացեալ Նահանգներուն, ինչ գնով ալ ըլլայ: Աշխարհի մը մէջ, ուր Ուաշինկթըն կրնայ ընել այն, ինչ որ կ'ուզէ (եւ կ'ընէ): Անոնք, որոնք դէմ են աշխարհին տիրելու Ուաշինկթընի ծրա-գիրին, իրենց ներշնչումը պիտի ստանան որեւէ տե-ղէ: Ներկայիս ներշնչում միակ աղբիւրները Սատ-տամ Հիւսէյնը, Պեն Լատինը եւ վարչակարգութեամբ իրենց վարկը շահած ուրիշ քանի մը անձեր են:

ՌՈՆ ԵՆՅԵՐՊՍ

Համացանցի «Բառնթըրֆանչ» կայք

Շար.՝ էջ 8

ՅՈՒԵԳՈՅՆԷՆ ՎԱԽՅԷՔ

Դէպի Հեպրոն Իսրա- յէլի «մաքրագործման» արշաւը միայն պիտի գրգռէ տագնապը եւ եր- բեք պիտի չլուծէ զայն: Այս արշաւը անգամ մը եւս հաստատած է ար- տակարգ դրուածքները, որ արդէն իսկ օրեր շա- րունակ հազարաւոր պա- դեստինցիներ բանտար- կած է իրենց տունները: Հեպրոնի պէս քաղաքները շարունակ մտտք գործե- լով՝ Արիէլ Շարոն կան- խամտածուած կերպով կը դրդէ պաղեստինեան անձնապաշտպան գոր- ծողութիւնները, եւ երբ այսպիսի գործողութիւն մը տեղի ունենայ, ան կը պաշտպանէ նման բռնագրաւումներ կա- տարելու իր իրաւունքը: Շարոնի համար վայրա- գուցեան վերջ տալու եւ պաղեստինցիներուն ստիպողաբար իրենց իրաւունքներէն հրաժա- ըիլ տալու միակ միջոցը պաղեստինեան շրջաննե- րը գործածելու գրաւելն է: Այս քաղաքականու- թիւնը կու գայ այն գի- տակցութեան, թէ պա-ղեստինեան ընկերու- թիւնը կարողութիւնը կունի երկար ժամանակ իսրայէլի պարտադրած հաւաքական պատիժնե- րուն դիմանալու՝ առանց վերջնականօրէն տապա- լելու: Ուսումնասիրու- թիւնները ցոյց կու տան, որ բռնագրաւելով շրջան- ներուն մէջ կեանքը որ- քան դժուար դարձած է: Կայ տնտեսական այնպի- սի ծանր տագնապ մը, որ պաղեստինցիներուն գրե- թէ կէսը ստիպուած է դրամ փոխ առնել իր հիմ- նական սնունդը ճարելու համար:

Մարտի կը կարծէ, թէ ռազմական մեծ ուժի գործածութիւնը իրեն պիտի արտօնէ պաղես- թինեան հողերու կապակցու- թեամբ անապատի բնաւ չէր յիշուած: Նպատակը

ժողովրդավարութեան սիրոյն ժողովրդավարու- թիւնը զարգացնել չէ, այլ՝ առանց հակաիսրա- յէլեան ընդդիմութեան՝ կացութիւն մը ստեղծելու: Պաղեստինեան պե- տութեան մը Պուշի պատ- կերացումը այն է, թէ պաղեստինեան ղեկավա- րութիւնը բարեկաւուրի՝ բռնագրաւումի բոլոր ընդդիմութիւններուն դէմ պայքարելու կարող- լութիւնը ունենալու աս- տիճան: Միացեալ Նա- հանգներու ու կարգաւոր- մեծ շահ ունին նաւը ճամ- բայ ելլելէն առաջ ընկղղ- մելու: Արաբական աշխարհին մէջ ոմանք դրական երե- ւոյթներ գտան Պուշի ճառին մէջ, ինչպէս՝ հաս- տատ ժխտում Շարոնի այն կարծիքին, թէ Այսր- յորդանանն ու Կազա- «անհամաձայնութեան մէջ են»: Պաղեստինեան կողմէ անոնք, որոնք Օս- լոյին կ'ընդդիմանան գա-ղափարական պատճառ- ներով կամ որովհետեւ ան բան մը չէ իրականա- ցուցած ցարդ, ահաբե- կիչներ են կամ խանգա- րիչներ: Հապա Լիքուտ կուսակցութիւնը, որ երբեք գաղտնի չէ պա- ճան Օսլոյի համաձայնու- թեան իր ընդդիմութիւնը կամ փորձած է ջնջել զայն: Անոնք բոլորը «խաղաղութեան մար- դիկ» են: «Խաղաղութեան» մարդ» է նաեւ Միացեալ Նահանգներու պաշտպա- նութեան նախարար Տո- նըլու Ռամսֆելտը, որ հեզանքով կը խօսի երբեք զարգացող եւ պա- ճան Օսլոյի համաձայնու- թեան իր ընդդիմութիւնը կամ փորձած է ջնջել զայն: Անոնք բոլորը «խաղաղութեան մար- դիկ» են: Արդեօք Ռամսֆելտ բռնագրաւումի եւ բնա- կեցման ծրագիրներուն նկատմամբ չէ՞ որդեգը- րած կեցուցած մը, որ ուղղակիօրէն կը հակա- սէ իր «գործատիրոջ» եւ Միացեալ Նահանգներու իրերապաշտպան վարչա- կարգի մարտնչական ծրագրերը: Միացեալ Նահանգներու կեղծ ու յանկարծակի սէ- րը: Այս բառը պաղես- տինցիներու կապակցու- թեամբ նախապէս բնաւ չէր յիշուած: Նպատակը

ԻՐԱՔԻ ԴԷՄՊԱՏԵՐԱԶՄՄԸ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՄԱՐ ԵՐԿՍԱՅՐԻ ՍՈՒՐ

Նոյեմբերի ընտրութիւններէն ետք ինչ կազմ ալ ունենայ Թուրքիոյ կառավարութիւնը, կ'ակնկալ- ւի, որ ան նեցուկ կանգնի իրաքի վրայ Մ. Նահանգ- ներու կատարելիք գինուորական յարձակումին: Սա- կայն իրաքի վրայ յարձակում մը կրնայ ժխտական շարք մը լուրջ անդրադարձներ ունենալ Թուրքիոյ վրայ:

Թուրքիա, որ կը վախնայ, թէ նման յարձակում մը աւելի եւս կրնայ վատթարացնել երկրին տնտեսա- կան լուրջ տագնապը, ինչպէս նաեւ՝ վտանգել երկ- րին սահմանները, Ուաշինկթընի կողմէ ուղղած է պա- տերազմի չձեռնարկել:

Իսլամ Թուրքիոյ մէջ հանրային կարծիքը բոլորո- վին դէմ է իրաքի վրայ յարձակումին, ինչ որ գժուա- րութեան պիտի մատնէ Թուրք քաղաքական մարդի- կը, երբ անոնք նեցուկ կանգնին Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը տապալելու Միացեալ Նահանգներու ծրագիրին:

Սակայն Թուրքիոյ համար Միացեալ Նահանգնե- րու հետ յարաբերութեան կարեւորութիւնը կը գերա- գանցէ բոլոր այս մտահոգութիւնները: Ի տես Միաց- եալ Նահանգներու հետ մեր ռազմավարական գոր- ծակցութեան եւ անկէ ստացած մեր հսկայական օժանդակութեան, այլընտրանք չունինք՝ ո՛չ քաղա- քականօրէն, ո՛չ ալ բարոյապէս», ըսաւ Թուրքիոյ նախկին արտաքին գործոց նախարար Իլթին Թուրք- մէն: «Այս գործողութիւնը շարք մը վտանգներ պի- տի յառաջանցէ, սակայն մենք Թուրքիան ոտքի պա- հելու մեծ կարելիութիւններ ունինք... եւ պէտք է, որ հետեւանքներուն հետ հաշտուինք», աւելցուց ան: «Թուրքերուն համար կարեւոր է այս արշաւին մասնակցութիւնը, որպէսզի յետ ստատման քաղա- քական զարգացումներուն մէջ իրենց ըսելիքը ունե- նան», ըսաւ քաղաքագէտ մը:

Յոյեմբերին Թուրքիոյ մէջ տեղի պիտի ունենան խորհրդարանական կանխահաս ընտրութիւններ: «Իրաքի դէմ գործողութեան մը ընթացքին ինչպիսի՞ կառավարութիւն մը պիտի ունենայ Թուրքիա. ահա ճճ հազար տոլար արժող հարցումը», ըսաւ Թուրքմէն. սակայն անկախաբար այն իրողութեան, թէ որո՞նք

իշխանութեան պիտի հասնին, իսլամականներ թէ ազ- գայնականներ, անոնք չեն կրնար առանց բանակին կարծիքը առնելու գործել, իսկ բանակը պատրաստ պիտի ըլլայ Միացեալ Նահանգներուն նեցուկ կանգ- նելու: թուրքիոյ մէջ տիրող քաղաքական անորոշու- թիւնը կրնայ նաեւ պատճառ դառնալ, որ Թուրքիա չկարենայ իր շահերը պաշտպանել: Թուրքիոյ սահմա- նին միւս կողմը կատարելիք գինուորական գործո- ղութիւնը վստահաբար մեծ հարուած մը պիտի հասցը- նէ Թուրքիոյ զբօսաշրջութեան, ժամանակի մը, երբ երկիրը կը պայքարի 1945էն ի վեր իր դիմագրաւած ամէնէն ծանրակշիռ տնտեսական տագնապէն դուրս գալու:

Թուրքիոյ բանակը յատկապէս մտահոգ է, որ իրա- քի վրայ յարձակումը կրնայ հարցեր ստեղծել Թուր- քիոյ հարաւարեւելքը, որ անցնող 17 տարիներուն Թուրքիայի հետ կապերը իսլամական կեանքներ իսլամ քաղաք- քաղական հակամարտութեան:

Թուրքիա երաշխիք կ'ուզէ, որ հիւսիսային իրաքի մէջ զբոսական պետութիւն մը պիտի չհիմնուի: Թուր- քերը կը վախնան, որ նոր հայրենիքի մը կազմու- թիւնը կրնայ հրահրել իրենց երկրի քրեւորները:

Իրաքի մէջ վարչակարգի փոփոխութիւնը կրնայ նաեւ առեւտուրի նոր շուկայ մը բանալ Թուրքիոյ առջեւ: Իրաքի պարտադրուած առեւտուրի պատժա- միջոցներուն իբրեւ հետեւանք՝ Թուրքիա 30 միլիարտ տոլարի վնաս կրած է:

«Թուրքիա կը գիտակցի, որ եթէ գործակցի Միաց- եալ Նահանգներու հետ, շատ բան պիտի կորսնցնէ, սակայն ան կրնայ նաեւ շատ բան շահիլ», ըսաւ Ան- գարայի համալսարաններէն մէկուն մէջ միջազգա- յին յարաբերութիւններ դասաւանդող փրոֆեսօր Հիւսէյն Պաղճի: «Թուրքիա Մ. Նահանգներու շոգե- կառքին միացած վակոն մըն է, ուր որ երթայ շոգե- կառքը, վակոնը կը հետեւի...», աւելցուց ան:

ԱՅԼԱ ՓԱՆ ԵԱՔԻՆ

«Թոյթըրք»

«ԱՐԱՊ ՆՈՒՉ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՍԱՅ ԳԱՂԹՈՃԱՆԻ

Սուրբաթի հայ գաղթածակը արագ բարգաւաճման ժամանակաշրջանն էր ետք սկսաւ տկարանալ ժ.Ը. դարու վերջաւորութեան, Հնդկաստանի քաղաքական վերիվայրումներուն եւ անգլիական, ֆրանսական ու հոլանտական մրցակցութեան պատճառով, երբ առեւտրական ուղիները փոխուեցան, եւ Սուրբաթ սկսաւ անշքանալ:

ԱՌԱՆՋԱՇՆՈՐՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԱԹԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Սուրբաթի հայերը, խոնա Փանոս Քալանթարի եւ անգլիական Արեւելեան Հնդկական ընկերութեան միջեւ գոյացած համաձայնութեանէն ետք (1688) առանձնաշնորհումներ ստացան անգլիացիներէն: Անգլիացիք արդէն ամրապնդած էին իրենց տիրապետութիւնը Հնդկաստանի մէջ, իսկ Սոդոլ արքայական տան հեղինակութիւնը տկարացած ըլլալով՝ տեղական իշխանութիւնները զօրացած եւ առանձին տիրութիւններ հաստատած էին: մեծապէս զօրացան մանաւանդ սիսերը: Ի վերջոյ անգլիացիք 1716ին, Ֆարուքի Սիարի օրով յաջողեցան որոշ գումարի մը փոխարէն ձեռք ձգել առանձնաշնորհում մը, որուն հիմամբ իրաւունք կը ստանային մաքս չվճարելու իրենց արտածած ապրանքներուն համար:

Նոյն ժամանակ հնդկական տեղական իշխանութիւնները, տեսնելով հայոց յաջողութիւններն ու բարգաւաճ վիճակը, կարգ մը առանձնաշնորհումներ տուին անոնց, իսկ կարգ մը առեւտրականներ ալ առանձին շնորհներու արժանացան:

Այս ժամանակ, ժ.Ը. դարուն Սուրբաթ Հնդկաստանի ամէնէն մեծ եւ բարգաւաճ քաղաքը դարձած էր իր 800 հազար բնակչութեամբ:

ՀԱՅՈՒ ՄԸ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐՈՒՄԵՆԵՐԸ ՍՈՒՐԱԹԻ ԳՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ

Սուրբաթի խաղաղ, բարգաւաճ ու առանձնաշնորհ վիճակը խանգարուեցաւ 1759ին, իսկ մը ղեկ կատարուած ռիսիկ մը եւ անոր իրաւունք հակադրութիւն՝ անգլիական գրաւման պատճառով:

Արդարեւ, հայ գոհարավաճառ մը Պասրա-

յէն Սուրբաթ ժամանելով սենեակ մը վարձած էր հայ եկեղեցւոյ մօտակայքը, ուր միթերած էր թանկագին քարերու իր հաւաքածոն: Ան մեծ թիւով գործընկերներ ունէր՝ եւրոպացի, հայ, հինտու եւ իսլամ, որոնք առուձախ կ'ընէին իրեն հետ: Օր մը Սուրբաթի կառավարիչին խորհրդականը այցելութիւն մը տուաւ անոր՝ կառավարիչին համար քարեր գնելու նպատակով, բայց առանձին գտնելով զայն՝ դաշուհաւարեց եւ գոհարեղէնները վերցնելով փախուստ տուաւ: Երկու օր ետք, որ կիրակի էր, հայեր ըստ սովորութեան զայն եկեղեցին շտեմնելով փութացին սենեակը եւ գտան գետին փոռած անոր անկենդան մարմինը: Երկար խուզարկութենէ ետք ռճրագործը ձեռք բերեցաւ եւ գողոնը բռնուեցաւ: Սուրբաթի հայերը արդարութիւն պահանջեցին կառավարիչէն, բայց ան պատասխանեց՝ ըսելով. «Հայր մը կենսաբնական մահուանը պետական խորհրդականի մը եղունգին ծայրը չի կրնար կտրուիլ»:

Այս դէպքը նպատակաւ առիթ եւ պատրուակ հանելով անգլիացիք զօրք ցամաք հանեցին եւ գրաւեցին Սուրբաթը:

Անգլիական գրաւումէն ետք Սուրբաթի առեւտրական կարեւորութիւնը նուազեցաւ եւ Պոմպէյի առաջնակարգ դիրք ձեռք ձգեց: Հայ վաճառականներ թէեւ Սուրբաթի մէջ շարունակեցին իրենց գործունէութիւնը, բայց Պոմպէյի բարգաւաճումը նկատի ունենալով՝ անոնցմէ շատեր սկսան հոն տեղափոխուիլ (նշենք, որ Պոմպէյի գաղութին հիմնադրիչները, 1670ական տարիներուն, Սուրբաթի հայերն էին):



Պոմպէյի հայոց Սուրբ Պետրոս եկեղեցւոյ խորանը

Այս ժամանակ Սուրբաթի ակաւաւոր գոհարավաճառներէն էր խոնա Յովհաննէս Ռաֆայէլ: ան հնդկական հռչակաւոր 195 քարաթ աղամանդ մը գնելով՝ 1775ին զայն ուսուցիչ իր կարգին, Օրլով թանկագին աղամանդը ներկայացուց եկատերին ա. ցարուհիին, որ զայն գետեղել տուաւ կայսերական մականին:

Ս. ԱՍՏՈՒՄԵՆԻՆ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՌՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՏՔ. ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՏԿԱՐԱՅՈՒՄԸ

Սուրբաթի հայերը ժ.Ձ. դարուն արդէն ու-

նէին եկեղեցի, որուն շուրջ կը գտնուէր գերեզմանատունը: Գաղութը, բազմազան եւ բազմեղանակ ըլլալով, կարիք կը զգացուէր երկրորդ եկեղեցւոյ մը կառուցման, ինչ որ ապացոյց էր, որ բաւական ստուար թիւով հայութիւն կեդրոնացած էր հոն: Այսպէսով, 1778ին կառուցուեցաւ Սուրբ Աստուածածին եկեղեցին: Նշենք, որ հին եկեղեցին ժամանակի ընթացքին աւերուած է, իսկ նոր եկեղեցին, հետագային, ժամանակ մը լքուած մնալէ ետք դարձան վերածուած է:

Այնուհետեւ սկսաւ Սուրբաթի գաղութին աստիճանական անշքացումը: Հնդկական շուկային տիրանալու համար անգլիական, ֆրանսական եւ հոլանտական բուռն պայքարը մեծ վնաս հասցուց հայերուն, իսկ Պոմպէյի բարգաւաճումով Սուրբաթ կորսնցուցաւ իր շին վիճակը եւ կարեւորութիւնը՝ իրրեւ հայ առեւտրականներուն կողմէ ներքին գաւառներէն ապրանքներու մթերման եւ եւրոպացիներու հետ փոխանակման կեդրոն:

Տակաւին այս ժամանակ առնուազն 300էն 400 հայեր կը բնակէին Սուրբաթի մէջ եւ չորս քահանայ ունէին: 1780-1800ական տարիներուն հոն մնացած էին երեսուներեք հայ առեւտրականներ, որոնց գլխաւորներն էին՝ Աղա Օհանջան Յակոբ հետեւեալ նամակը ուղարկեց Նոր Զուղայի առաջնորդին.

«Այս օրերս մենք տագնապալի ժամանակներ կ'անցընենք, քանի որ անգլիացիները պատերազմի բռնուած են Ֆրանսացիներուն եւ Հայտար Ալիի հետ եւ ներկայիս հոլանտացիներուն հետ կը կռուին, այնպէս որ, թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ կռուի կայ: Մեր վաճառականները կորսնցուցին երկու հարիւր հազար ռուբլի նաւու մը մէջ, որ Զիւնաստանէն կու գար եւ բռնուեցաւ ծովու վրայ: Վերջերս մահարարեցին բռնեցին նաւ մը, որ Պեկակային Սուրբաթ պիտի գար: Անոր պատճառով մենք կորսնցուցինք երկու հարիւր յիսուն հազար ռուբլի»:

Նոյն նամակին մէջ մանրամասն պատմելէ ետք սարսափելի փոթորիկ մը, որ ամիս մը առաջ պատահած էր Սուրբաթի մէջ, Աղա Օհանջան Յակոբ կը շարունակէ՝ ըսելով.

«Նաւ մը, որ Պասրա պիտի երթար, կորուծուիւ վրայ. անոր մէջ մեր վաճառականները կորսնցուցին հարիւր յիսուն հազար ռուբլի արժողութեամբ ապրանք: Պոմպէյէն հայերը մեզի դրված էին քառասունհինգ հազար մետաքս, բայց նաւը խորտակուեցաւ եւ բեռը կորսուեցաւ: Այս բոլոր դժբախտութիւնները մեզի հասան քառասուն օրուան ժամանակամիջոցի մը մէջ: մենք մեր ըսելիքը չենք գիտեր: Սուրբաթի մեր վաճառականներուն

ԽՈՒՆԱ ՓԱՆՈՍ ՔԱԼԱՆԹԱՐ ԵՒ ԱՆՈՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Սուրբաթի հայ վաճառականներուն մէջէն ամէնէն աւելի նշանաւոր դարձաւ խոնա Փանոս Քալանթար: Բնիկ նոր ջուղայեցի, ան առեւտրական ասպարէզ նետուեցաւ եւ ժամանակ մը ետք, Սուրբաթի բարգաւաճումը նկատի ունենալով, գնաց հաստատուեցաւ հոն: Ան առեւտրական իր գործառնութիւնները ընդարձակելով մեծ հարստութիւն դիպեց եւ Սուրբաթի հայութեան գլխաւոր ղեկավարը դարձաւ: Անգլիացիք, որոնք Հնդկաստանի մէջ իրենց ներկայութիւնը ամրապնդած են Սուրբաթ իրենց գլխաւոր կեդրոնին վերածած էին, զայն ճանչցան իրրեւ հայութեան ներկայացուցիչ եւ «հնչակաւոր հայ վաճառական»ի կոչումը շնորհեցին անոր:

Խոնա Փանոս Քալանթար 28 Յունիս 1688ին անգլիական Արեւելեան Հնդկական ընկերութեան հետ կնքեց համաձայնագիր մը, որուն հիմամբ հայութեան համար առանձնաշնորհումներ ձեռք ձգեց եւ անգլիացիներուն հետ գործակցութեան պայմաններ ստեղծեց: Համաձայնագիրին ստորագրման օրը իսկ անգլիացի կուսակալը եւ Արեւելեան Հնդկական ընկերութիւնը անոր տուին *մեղսիկի* առեւտրի մեծաշնորհը, որուն հիմամբ ան եւ անոր սերունդները փոքր մաքսով եւ սովորական վարձքով ընկերութեան նաւերով առեւտուր կատարելու իրաւունք կ'ունենային:

Նոյն տարին՝ 1688ին խոնա Փանոս իր ազգական խոնա Իսրայէլ Սարգստի հետ Լոնտոն մեկնեցաւ անգլիացիներուն հետ առեւտրական գործառնութեան եւ Բարեյուսոյ հրուանդանէն անգլիական նաւերով երթելի շուրջ բանակցութիւններ կատարելու համար:

Արեւելեան Հնդկական ընկերութիւնը բանակ կազմելու համար 1692ից՝ դիմեց խոնա Փանոս Քալանթարի, որպէսզի ան համոզէ նոր ջուղայեցի իր հայրենակիցները՝ զինուորագրուելու հնդկական բանակին: Անգլիական հրամանատարութիւնը խոստացաւ Պանոսը Ապպասէն Պոմպէյ անոնց փոխարձակելու ստանձնել եւ անգլիացի զինուորներուն հաւասար քառասուն շիլին ամսաթոշակ յատկացնել անոնց: Խոնա Փանոս հաստատեց, որ շատ դժուար պիտի ըլլար կարելոք թիւով հայեր զինուորագրել, որովհետեւ

անոնք սովորաբար հետամուտ են առեւտուրի:

Խոնա Փանոսի մահուան վայրն ու բուրակը անյայտ կը մնան. կարծիքի մը համաձայն, ան Լոնտոն առաքելութեան մը ժամանակ հոն մահացաւ: Այլ կարծիքի մը համաձայն, ան վերադարձաւ իր ծննդավայրը՝ Նոր Զուղա եւ հոն ալ մահացաւ: Զուակը՝ Քալանթար մահացաւ 6 Մարտ 1695ին, Սուրբաթի մէջ եւ հոն ալ թաղուեցաւ:

Քալանթարներու գերդաստանէն ընտանիքներ կը բնակէին նաեւ Ագրայի մէջ, անոնցմէ յիշեցը Օհանջան (մահացած՝ 1659ին) եւ Սուրբանու (մահացած՝ 1673ին). անոնք հաւանաբար եղբայրներ կամ եղբորդիներն էին խոնա Փանոս Քալանթարի: Քալանթարներ կը բնակէին նաեւ Մատրասի մէջ:

Արեւելեան Հնդկական ընկերութեան 27 Յունուար 1664ի տեղեկագրի մէջ յիշատակութիւն կայ Յակոբ եւ Աւետիք Քալանթարներու մասին, իսկ 24 Փետրուար 1664ի տեղեկագրի մէջ յիշուած է, որ Քալանթար, հայ մը, 15 ռուբլի վճարած է Լոնտոնէն: Սուրբաթ ճամբորդութեան մը համար:

Խոնա Փանոսի արական ճիւղէն սերունդ չէ մնացած, սակայն հնդկահայ երեւելի կարգ մը ընտանիքներ իրենց գիրենք սերած կը նկատեն խոնա Փանոսի դուստրէն, որ մուսուկացած էր ջուղայեցի Խոնա Եմինիազ ազնուական գերդաստանէն խոնա Միմասի հետ: Անոնց միակ դուստրը՝ Հոիփսիմէ ամուսնացած էր Սուրբաթի երեւելի Շուխուրեան ընտանիքէն Սաթուր Թարխանի հետ: Սաթուր Թարխան իր ընտանիքին հետ Սուրբաթէն փոխադրուեցաւ Կալկաթա, ուր մահացաւ 1761ին, 36 տարեկանին, եւ թաղուեցաւ հայոց Սուրբ Նազարէի եկեղեցւոյ շրջափակը: Այրին՝ Հոիփսիմէ երկրորդ անգամ ամուսնացաւ եւ մահացաւ 1770ին, եւ թաղուեցաւ իր առաջին ամուսնու կողքին: Երկրորդ ամուսինը՝ Մովսէս մահացաւ երեք տարի ետք, 1773ին, եւ թաղուեցաւ իր կնոջ կողքին:

Սաթուր Թարխանի եւ Հոիփսիմէի դուստրն էր Պեկուսը. ծնած՝ 1755ին, ամուսնացաւ Աղա Խաչիկ Առաքելի հետ, 1771ին, Կալկաթայի մէջ,

ՄՂՏԵՍԻ ԽՈՒՆԱ ՄԱՐՏԻՐՈՍ

Հնդկահայ երեւելի դեմքերէն էր բնիկ նոր ջուղայեցի մեծահարուստ վաճառական Մղտեսի խոնա Մարտիրոս: Կնոջ մահէն ետք ան Հոնմ եւ Երուսաղէմ ուխտագնացութիւններ կատարեց, յետոյ վերադարձաւ Նոր Զուղա, երկու գաւակներուն տուաւ իր հարստութեան անոնց ժառանգ ինկած բաժինը, ապա բարեգործութեան եւ Աստուծոյ ծառայութեան նուիրուելով՝ ինքզինք «Յիսուսի փոքրիկ ծառան» կոչեց եւ խնդրեց, որ մարդիկ այդ անունով կոչեց զինք:

Մղտեսի Մարտիրոս առեւտրական իր ասպարէզ շարունակելով՝ ճամբորդեց գաւազան երկիրներ, մեծ գործառնութիւններ կատարեց եւ հազարաւոր ոսկիներ շահեցաւ: Իր գործունէութիւնը գլխաւորաբար հնդկական շուկային հետ ըլլալով՝ ան բնակութիւն հաստատեց Ագրայի մէջ, ուր իր շահած բոլոր դրամը աղքատներուն կը բաժնէր եւ նոյնիսկ իր անձնական ապրուստին համար բաժնէր չէր հաներ: Ան յաճախ կ'ըսէր. «Այս ապրանքները այլուս ինծի չեն պատկանիր, այլ՝ Տէր Յիսուսի»: Անգամ մը ան երկար դատավարութեան մը ետք հինգ հազար ոսկի շահեցաւ, սակայն անմիջապէս այդ դրամը բաժնեց աղքատներուն, բայց քանակները քանակեց, օգնեց շատ մը կարօտեալներու եւ բարի վարք ունեցող աղքատներու ծփոտ տուաւ:

Մղտեսի Մարտիրոս 1611ին Ագրայի մէջ մատուց մը կառուցել տուաւ Ճահակի կայսեր նուիրած հողին վրայ, հոն ամփոփելու համար քրիստոնէաներու անկները: Նոյն տարին ան մահացաւ էք թողուեցաւ իր կարողացել տուած մատուց մէջ: Հոն ամփոփուեցան նաեւ քաղաքին մէջ մահացած քրիստոնէաներու անկները: Իր խնդրանքին համաձայն, դամբարանին վրայ արձանագրուեցաւ. «Աստուածազնի Մարտիրոս, գերին Տէր Յիսուսի»: Իրմէ ժառանգ մնացած դրամին մէկ մասը յատկացուեցաւ մատուցը շէն ու կանգուն պահելու, իսկ մնացեալ մասը բաժնուեցաւ աղքատներուն, զորս ինք նշանակած էր ժառանգորդ իր հարստութեան:

կրած ամբողջ կորուստը վեց հարիւր հազար ռուբլիէն աւելի է, որուն մեծ մասը ինծի կը պատկանի: Աստուծոյ կամքը ըլլայ»:

Հնդկաստանի քաղաքական իրավիճակը հետզհետէ վատթարացաւ. Մայրոքի ղեկավար Հայտար Ալի եւ զաւակը՝ Թիփու Ասլոբան ամէն գնով կ'աշխատէին արեւմտեան ծովափնեայ գոտին իրենց հակառակորդ տակ առնել, իսկ հարաւային Քերալայի Թրաւանքոր շրջանի ղեկավար Ռամա Վարմա, ինչպէս նաեւ այլ իշխանաւորներ սաստկացուցին իրենց յարձակումներն ու նուաճումները: Ամբողջ կեդրոնական-արեւմտեան եւ հարաւային Հնդկաստանը անիշխանութեան ու քաոսի մատուցած էին, իսկ ծովերու վրայ երթելու մեծապէս դժուարացած էր:

Այս պայմաններուն տակ Աղա Օհանջան Յակոբ 18 Փետրուար 1784ին գրուած նամակի մը մէջ կ'ըսէ.

«Մենք աստիճանաբար կը նստմանք, կ'աղքատանք եւ վտանգներն ու դժբախտութիւնները կ'աւելնան օրէ օր: Շատեր ծանր վնասներ կրեցին եւ սնանկացան անցնող Մարտի փոթորիկին պատճառով, որուն մէջ եւ կորսնցուցի յիսուն վեց հազար ռուբլի: Հիմա ձաւալէն եկող նաւերը կ'ամ կը բռնուին, կ'ամ կ'ընկղմին, որուն պատճառով մեր վաճառականները կորսնցուցին երկու հարիւր հազար ռուբլի, որուն տասներեք հազարը ինծի կը պատկանէր»:




Մղտեսի խոնա Մարտիրոսի դամբարանը Ագրայի մէջ

ոնով, որուն մէջ եւ կորսնցուցի յիսուն վեց հազար ռուբլի: Հիմա ձաւալէն եկող նաւերը կ'ամ կը բռնուին, կ'ամ կ'ընկղմին, որուն պատճառով մեր վաճառականները կորսնցուցին երկու հարիւր հազար ռուբլի, որուն տասներեք հազարը ինծի կը պատկանէր»:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՍՈՖԻԱՅԻ ՄԷԶ

ԱՅՍՕՐ՝ ՊՈՒԼԿԱՐԻԱ – ԳԵՐՄԱՆԻԱ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Գերմանիայի ֆուտբոլի ազգային խումբը այսօր կը կատարէ իր առաջին մրցումը, 2002ի Մոնտիալի աւարտական ճակատումէն ետք. անոր մրցակիցը պիտի ըլլայ Պուլկարիա:



Օլիվեր Զան, որ աճցեալ շաբաթավերջին վիրաւորուելով (Արմինիա Պիլքֆելտի դէմ), դուրս մնաց Պուլկարիոյ դէմ տեղի ունենալիք մրցումէն:

Մարպիչ Ռուտի Վեյլը պիտի փորձէ առանց դժուարութիւններու առջեւ գտնուելու լաւ մրցում մը կատարել, հակառակ անոր որ ան պիտի ունենայ կարգ մը հիմնական բացակայ մարզիկներ:

Ստաշին հերթին բերդապահ եւ խմբապետ Օլիվեր Զան, որ վիրաւոր է պիտի չկարենայ դաշտ ներկայանալ: Անոր բացակայութիւնը պատճառ պիտի ըլլայ, որ խումբին խմբապետի պաշտօնը վստահուի Ենս Տերենիսի, որ Սոֆիայի մէջ տեղի ունենալիք այս մրցումին պիտի փորձէ առաւելագոյն ձեւով կատարել իր այդ պաշտօնը:

Բացականերու շարքին են նաեւ՝ Տիեթմար Համան (Լիվըրփուլ) եւ Օլիվեր Նեօվիլ (Պայեր Լեւերքուզըն), որոնք եւս վիրաւոր են:

Երկու խումբերուն համար այս մրցումը պիտի ըլլայ վերջինը՝ նախքան Եւրօ-2004ի ֆուտբոլի մրցաշարը: Գերմանիա յառաջի-

կայ Սեպտեմբեր 7ին կը ճակատի Լիթվանիոյ դէմ, իսկ Պուլկարիա՝ Պելճիքայի դէմ (նոյն օրը):

Պուլկարիոյ մարպիչ Փլամէն Մարքովի համար եւս այս մրցումը պիտի ունենայ կարեւոր նշանակութիւն, նկատի ունենալով, որ ան պիտի յստակացնէ մրցաշարքին մասնակցող իր կազմը:

Այսօր տեղի ունենալիք այս մրցումին հետաքրքրական պիտի ըլլայ 36 տարեկան վեթեմի Բրանսլիի Պայաքովի դաշտ ներկայանալը, կազմի մը դէմ, որուն նշանակած կողմ պատճառ դարձած էր, որ Ֆրանսայի չկարենայ 1994ի Մոնտիալին իր մասնակցութիւնը բերել:

Ան միակ մարպիչն է, որ մնացած է ազգային խումբին մէջ, 1994ի Մոնտիալէն ետք: 82 անգամ ազգային խումբին շապիկը կրած է 14 միջազգային կոլ նշանակած Պայաքովի համար շատ հաւանաբար այս մրցումը ըլլայ միջազգային վերջին մրցումը:

Ստորեւ՝ Գերմանիոյ հաւանական կազմը.

ԵՆՍ ԼԵՆՎԱՆ – Զրիսթֆ Մեթքելտըր, Զարսթըն Ռամսելով, Ինկօ Շերթը (կամ) Անդրէ Ֆրէտրիշ – Պեռնո Շնայտըր, Ենս Տերենիս, Սեպասթիան Էնհլ, Տանիէլ Պիեռոֆա, Միքայէլ Պալաք – Միրոսլաւ Զլոք եւ Զարսթըն Եանքըր:

ՐԵՏԵԼԱՐՇԱՒ ՓԱՆԹԱՆԻ ԸԱՐՅՈՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնը, երէկ մարպական պատիժներ սահմանող յանձնախումբէն պահանջեց իտալացի հեծելանորդ Մարքո Փանթանիի դէմ սահմանուած պատիժը հաստատել:

Նախապէս Ֆրանսայի հեծելարշաւի շրջավայրը շահած Փանթանի, անցեալ Յունիսին ուր ամիսով կախակալուած էր, խթանիչ դեղեր գործածած ըլլալուն համար:

32 տարեկան Փանթանի սակայն միշտ ալ իր կատարած յայտարարութիւններուն ընթացքին կ'ըսէ, թէ ինք այդ առնչութեամբ անմեղ է: Անոր այդ կատարած յայտարարութեան հակառակը փաստած էր Իտալիոյ ոստիկանութիւնը, երբ

2001ին, Ժիրոյի շրջավայրին ընթացքին, անոր պանդոկի մը մէջ իջեւանած սենեակէն գտած էր խթանիչ դեղեր:

Հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնը, շաբաթակիցին հրապարակեց հեծելանորդներուն ընդհանուր դասաւորումը, որ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը (փակագծին մէջ անոնց գրաստ ղիրքերը).

	ԿԵՏ
1.- (1) Էրիք Յապըլ (Գերմանիա)	2224
2.- (2) Փաուլօ Պեթթիցի (Իտալիա)	2148
3.- (3) Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.)	2073
4.- (9) Տարիօ Ֆրիկօ (Իտալիա)	1529
5.- (4) Էրիք Տեքըր (Չոլանտա)	1511

ՌՈՆԱԼՏՕ ԳԱԼ ԵՂԱՆԱԿԻՆ ՊԻՏԻ ԼԵԷ ԻՆԹԵՐՈ

Ինթեր Միլանի նախագահ Մասիմօ Մորաթթի երէկ իտալական «Կապիթալ Տելլօ Սփոր» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին ըսաւ, թէ պրապիցի Ռոնալտօ Եղանակ մը եւս մաս կազմելէ ետք իր խումբին, պիտի լքէ Ինթերը:




Ռոնալտօ որուն հարցքն տակաւին կը մնայ անլոյծ

«Կ'ուզէ՞ք իմանալ, թէ այս հարցին լուծումը ինչ պիտի ըլլայ: Ռոնալտօ, իր պատկանելիքը եղանակ մը եւս մաս կազմելէ ետք Ինթերի, պիտի հեռանայ խումբէն, տիտղոսի մը տիրանալը կամ ոչ: Սպասեցէ՛ք եւ պիտի տեսնէ՛ք», կ'ըսէ Մորաթթի:

Յստակ չեղաւ սակայն, թէ այս հարցազրոյցը ե՛րբ տեղի ունեցաւ, այսինքն՝ Ռոնալտօյի կատարած յայտարարութենէն ե՛տք, թէ առաջ: Պրապիցին ըսած էր, թէ ինք որոշած է լքել Ինթերը, մանաւանդ որ այս վերջինը տեղեակ է իր պատճառներէն, որոնց մասին յայտարարութիւն կատարելու ճիշդ չէ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԱՅՍՕՐ ՀԻՒՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԹՈՒՆՈՒԶԻ



Զինետից Զիտան կը ժամանէ Թուրքիոյ օդակայանը

ՆԻՔԵՍՈՒԼ – ՈՒԵՍՈ ԶԱՄ 4-0

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան Ա. հասարակական յետաձգուած մրցումի մը, Նիքեսուլ, իր դաշտին՝ «Սէնթ Ճէյմս Փարք»ի մէջ 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք իր հիւրը՝ Ուեսթ Համը չամի բերդը: Յաղթաւորման պարագայովի դիրքը, իր ունեցած կոլեկտրիքի շնորհիւ գերազանցելէ ետք իր ետին գտնուող վեց խումբերը:

51 հասարակական հարցումներու ներկայութեան, թէեւ Ա. կիսախաղը վերջ գտաւ 0-0 արդիւնքով, սակայն Բ. կիսախաղին Նիքեսուլ չորս անգամ յաջողեցաւ ցնցել Ուեսթ Համի բերդը: Յաղթական կազմին կոլերը նշանակեցին՝ Լոմանօ Լուա Լուա (61րդ եւ 72րդ), Էլըն Շիրըր (76րդ) եւ Նոլպերթօ Սոլանօ (86րդ):

Իր կազմին արձանագրած այս յաղթանակէն խանդավառուած, Շիրըր յայտարարեց, թէ 2002-2003 եղանակին Նիքեսուլ պատրաստ է Արսենալի, Մանչեսթըր Եունայթեդի եւ Լիվըրփուլի նման անուանի ակումբներու դէմ պայքար մղելու եւ անցեալ եղանակի իր գրաստ ղիրքէն (4րդ) քիչ մըն ալ աւելի առաջ երթալու:

Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբը, կ'ակնկալէ ֆուտբոլի իր պատմութեան մէջ այսօր նոր էջ մը բանալ, մոռնալով 2002ի Մոնտիալին իր անխողութիւնը: Ֆրանսայի առաջին հիւրը պիտի ըլլայ Թունուզի, ֆուտբոլի միջազգային բարեկամական իր միակ մրցումը պիտի կատարէ նախքան Եւրօ - 2004ի պտուղի մրցաշարը:

Ֆրանսայի խումբը, որ մաս կը կազմէ Ա. խմբակին, պտուղի իր առաջին մրցումը պիտի կատարէ Կիպրոսի դէմ: Անոր մնացեալ մրցակիցները պիտի ըլլան Սլովենիա, Մայթա եւ Իսրայիլ:

Պաշտօնակալուած մարպիչ Ռոնէ Լըմէրը փոխարինած ժաք Մանսիի շատ կարեւոր մրցումի մը դէմ յանդիման պիտի գտնուի այսօր նաեւ անոր համար, որ պիտի կատարէ առաջին մրցումը: Իսկ երկրորդ մրցումը պիտի ըլլայ միակը, նախքան կարեւոր մրցաշարը մը սկսիլը, մանաւանդ որ անիկա տիտղոսակիրը ըլլալով, պէտք չէ 2002ի



ժաք Մանսիի կը հետեւի փորձերուն

Մոնտիալի ճիշդութիւնը կրկնէ:

Միջազգային նախկին մարպիչ մը ըլլալով, Մանսիին լա գիտէ, թէ այս սեւ էջը պէտք է այլեւս փակուած համարել եւ նոր էջ մը բանալ՝ շատ կարճ ժամանակամիջոցին:

մրցումներուն ընթացքին:

Թունուզի դէմ տեղի ունենալիք մրցումին անդրադառնալով, Մանսիին ըսաւ, թէ իր կազմին պիտի մարպիչներ՝ Սիլվէն Ռիթթորտ եւ Անթոնի Ռէվէ:

Մանսիինի մարպիչ նշանակուածով կ'ակնկալուի, որ խումբը վերադառնալ 4 - 3 - 3 իր խաղաոճին, որ կը կիրարկէր Լըմէրի նախորդը՝ Էմէ ժաքը:

1994ի Մոնտիալին իր տոմար չկարենալ ապահովելէ ետք, Ֆրանսայի իր նոր մարպիչ նշանակեց Էմէ ժաքը, որ իր պաշտօնին վրայ մնաց 33 մրցումի ընթացքին առանց պարտութիւն կրելու: Կ'ակնկալուի, որ Մանսիինի եւս հետեւի անոր օրինակին:

Նշենք, թէ ան համաձայն գտնուած է Թունուզի մարպիչ Եուսէֆ Չուաուիի հետ, որպէսզի մրցումին ընթացքին իւրաքանչիւր խումբ ուր մարպիչի փոփոխութիւն կատարէ:

Ստորեւ՝ այսօրուան մրցումին Մանսիինի դաշտ ներկայացնելիք կազմը.- Կրեկորի Քուփէ - Ուիլի Մանիոլ, Լիլիան Թիւրամ, Մարսել Տըսայի, Վենսան Քանուելա - Փաթրիք Վիէյրա, Քլօտ Մաթիէլէ, Էմանուէլ Փրթի, Չինիսին Չիտան - Ժիլբերթ Սիսէ եւ Թիերի Հանրի:

ՄԻՋՆԱԳԱՆՆԵՐ- Արթուր Պետրոսեան («Եանկ Պոյ»), Ալպեր Սարգսեան («Թորփետօ» Մոսկուա), Արթուր Ոսկանեան («Տէյնի Մէրֆի», Կիպրոս), Արտաւազ Քարամեան («Փիւնիկ»), Վարդան Մինասեան («Փիւնիկ»), Ռոմիկ Խաչատրեան («Սփոնթ», Կիպրոս), Դաւիթ Գրիգորեան («Միքա» Աշտարակ), Եղիշէ Մելիքեան («Բանանց» Երեւան), Համլէթ Միխրաբեան (Հ. Մ. Մ.):

ՅԱՌԱՍՏԱԳԱՆՆԵՐ- Արմէն Քարամեան («Փիւնիկ»), Էտկար Մանուչարեան («Փիւնիկ»), Անտրէ Մովսիսեան («Սաթուրն» Ռամենսկոյէ):

ՊԵՔԶԱՄ՝ ՄԻՋՆԱԳԱՆՆԵՐ, ԹԷ ՅԱՌԱՍՏԱԳԱՆՆԵՐ...



Պեքհամ դժգոհ էրիքըրնի ցոր գաղափարէն

Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին շուրջ տարի մարպիչ Սիլվէն Կորան Էրիքսընն այն կարծիքին է, որ Մանչեսթըր Եունայթեդը Տէյվիտ Պեքհամը պէտք է դաշտ ներկայացնէ իբրեւ կեդրոնի միջնապահ եւ ոչ թէ նկատուի առնուի աջ դիրքին վրայ: Առիթով մը միայն Պեքհամ դաշտ ներկայացած էր իբրեւ կեդրոնի միջնապահ, այդ ալ «Չէմփիըն» Լիկի ֆուտբոլի մրցաշարքին աւարտականին (1999) փոխարինելով՝ Ռոյ Քինը, որ կախակալուած էր այդ մրցումին:

Այսպիսով, Պեքհամ կը դառնայ հինգերորդ թեկնածուն, որ կրնայ ստանձնել կեդրոնի միջնապահի այդ պաշտօնը, անշուշտ թէ այդ մէկին համար պիտի գտնուի Մանչեսթըր Եունայթեդի մարպիչ Ալեքս Երիքսըն: Այդ շրջան եւս Ռոյ Քին, Խոսեան Սեպասթիան Վերոն, Փոլ Սքոլլ եւ Նիքի Պաք:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՆԱԽԱԳԱՅԸ՝ ԴԱՆԻԱ ՄԵՐԺԵՑ ԽՕՍԻԼ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՍԿՍԵԼՈՒ ԹՈՒՎԿԱՆԻ ՍԸ ՄԱՍԻՆ

ՔՈՓԵՆՀԱԿԸՆ, 20 (ՌՈՅԹԸՐԶ)։- Երրօրյալիկ Միուրթեան ընթացիկ նստաշրջանի նախագահ Դանիա մերթեց խօսիլ Թուրքիոյ Ե. Միուրթեան անդամակցութեան բանակցութիւնները սկսելու հաւանական թուականի մը մասին։

Դանիոյ վարչապետ Անտերս Ֆոկ Ռասմուսէն ըսաւ, որ Ե. Միուրթեան Թուրքիոյ մասին իր վերջնական արժեւորումը պիտի կատարէ Երրօրյալիկ Յանձնաժողովին կողմէ 16 Հոկտեմբերին հրապարակուելիք տեղեկագիրին մէջ։ Ռասմուսէն աւելցուց, որ յիշեալ տեղեկագիրին մէջ պիտի նշուի, եթէ Թուրքիա ամբողջացուցած է անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու քաղաքական պայմանները։ Վարչապետը ողջունեց Թուրքիոյ կառավարութեան որդեգրած միջոցառումները, դիտել տալով, որ անոնք դեպի յառաջ տանող քայլեր կը նկատուին։

Ռասմուսէն կը խօսէր Թուրքիոյ փոխ վարչապետ Մետուք Երլմաչի հետ ունեցած հանդիպումին աւարտին։ Երլմաչ իր կարգին ըսաւ, որ վերջերս Թուրքիոյ խորհրդարանին կողմէ վաւերացուած բարեկարգումի ծրագիրները յստակօրէն ցոյց կու տան, թէ Անգարա յանձնառու կը մնայ գործադրութեան դնելու եւ ամբողջացնելու Քոփեմիսկընի հաստատած բոլոր պայմանները, առանց վերապահութեան։ Երլմաչ աւելցուց, որ Թուրքիոյ ակնկալութիւնն է ամէնէն շուտ ժամանակամիջոցին սկսիլ անդամակցութեան բանակցութեան։ Ան աւելցուց, որ Դանիոյ նախագահութեան շրջանին, Թուրքիա - Ե. Միուրթեան կապերը նոր հանգրուան մը պիտի թելակոխեն։

ԻՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ԶԱԿԱՏԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ՝ ՄՏԱՀՈԳ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՊԱՌՆԱԼԻՔՈՎ

ԹԵՀՐԱՆ, 20 (ՌՈՅԹԸՐԶ)։- Իրանի բարեկարգչական ճակատի ղեկավարները մտահոգ են շրջան ընող այն լուրերով, որոնց համաձայն՝ պահպանողականները մտադիր են արտակարգ վիճակի դրութիւն մը հաստատելու ամերիկեան սպառնալիքներուն դիմաց։

Մամլոյ հրապարակած լուրերուն համաձայն արմատական - պահպանողական շարժումներ պետութեան կը պահանջեն արտակարգ իրաւասութիւն առկայելու համար քաղաքացիական իրաւունքները եւ հալածելու բարեկարգչականները, որոնք Վորապիզ կը կանգնին Միացեալ Նահանգներուն հետ աւելի լաւ կապեր ունենալու տեսակէտին։

Յիշեալ լուրերը մտահոգութիւն կը պատճառեն բարեկարգչական ղեկավարներուն, որոնք գլխաւոր դաշնակիցներն են նախագահ Մոհամէտ խաթեմիի։ Բարեկարգչական կրօնաւոր Հիւսէյն Մուսաուի Թապրիպի ըսաւ, որ կարգ մը աջակողմեաններ կ'անտեսեն ընդհանրական շահերը եւ կ'ուզեն որդեգրել ժայռայեղական միջոցառումներ խանգարելու ու խախտելու համար երկրին բնականոն ընթացքը։

ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ...

Շարունակուած 3րդ էջէն

սուլթան եւ դրական մօտեցումի կարեւորութիւնն ու ժխտական կամ մաքլցողական քայլերէ հրաժարելու անհրաժեշտութիւնը, վստահեցնելով, որ ինք պատրաստակամ է քննարկելու հարցերը եւ որոնելու բոլոր կողմերուն գոհացում տուող լուծումները։

Հակառակ Միւրթեանի հետ հանդիպումի կարեւորութեան (նկատի առած որ սենտիքաներու պահանջած իրաւունքները օրէնքով հաստատուած են, բայց ելեւմտաքի նախարարութիւնն է, որ սահեցուցած է անոնց վճարումը) եւ ձախողութեան, նախարար Միքայիլի հետ հանդիպումը դրական միջոցառում ստեղծած էր եւ յոյսեր ներշնչած՝ աշխատակողմաններուն։

Արդարեւ, սենտիքաներու ներկայացուցիչներուն հետ Միքայիլի հետ տեսակցելէ ետք, աշխատակողման ընդհանուր համադրանակցութեան նախագահ Չարն յայտարարեց, որ նախարարը դրական կեցուածք եւ անվերապահ գործակցութեան պատրաստակամութիւն յայտնելով հաւաստած է, որ փոխարքայ միջոցներու նախարարութիւնը այս հարցին գծով բոլոր անհրաժեշտ փաստաթուղթերը յղած է նախարարաց խորհուրդին։

ԵՐՐՈՊԱՅԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԵՔԻ ՈՂՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՓՈԹՈՐԻԿԸ ԿԸ ԸԱՍՆԻՆ... ԸԱՐԱԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. ՆՈՐԱԳՈՅՆ ՉՈՐԸ՝ ԱՐԺԱՆԹԻՆ

«Խենթ» բնութիւնը՝ իր ողողումներով, հեղեղներով եւ փոթորիկներով կը հարուածէ նաեւ հարաւային Ամերիկայի ցամաքամասը, իսկ Արեւելեան Եւրոպայի, Գերմանիոյ եւ Ասիոյ (Ճայրագոյն Արեւելք) մէջ աղէտը կը շարունակուի։

Արդարեւ, Գերմանիոյ մէջ կացութիւնը թեւ սկսած է յարաբերաբար նախորդող օրերուն մեղմանալ, այսուհանդերձ վտանգը կը յամենայ յատկապէս Մակտայուրիկի շրջանին մէջ։ Մարդիկ կը շարունակեն Էլ գետի երկայնքին միջոցառումներ որդեգրել՝ ամրապնդելու համար իրենց «ջրաթումբերը»։ Չորերը շրջանին կարգ մը մասերը թափանցած են արդէն, սակայն ուղղաթիւներով բանակին կողմէ նետուած աւազի տոպրակները կ'ունենան իրենց փրկարար դերը։ Ինչ կը վերաբերի վնասուած վայրերու բնակիչներուն, ապա քա-

նասուն հապար հոգի ցարդ կը մնայ հեռու իր բնակավայրէն։

Չեխիոյ մէջ ողողումները աւարտած են արդէն, շուրջըր մասը, իսկ Արեւելեան Եւրոպայի, Գերմանիոյ եւ Ասիոյ (Ճայրագոյն Արեւելք) մէջ աղէտը կը շարունակուի։

Արդարեւ, Գերմանիոյ մէջ կացութիւնը թեւ սկսած է յարաբերաբար նախորդող օրերուն մեղմանալ, այսուհանդերձ վտանգը կը յամենայ յատկապէս Մակտայուրիկի շրջանին մէջ։ Մարդիկ կը շարունակեն Էլ գետի երկայնքին միջոցառումներ որդեգրել՝ ամրապնդելու համար իրենց «ջրաթումբերը»։ Չորերը շրջանին կարգ մը մասերը թափանցած են արդէն, սակայն ուղղաթիւներով բանակին կողմէ նետուած աւազի տոպրակները կ'ունենան իրենց փրկարար դերը։ Ինչ կը վերաբերի վնասուած վայրերու բնակիչներուն, ապա քա-

նասուն հապար հոգի ցարդ կը մնայ հեռու իր բնակավայրէն։

Չեխիոյ մէջ ողողումները աւարտած են արդէն, շուրջըր մասը, իսկ Արեւելեան Եւրոպայի, Գերմանիոյ եւ Ասիոյ (Ճայրագոյն Արեւելք) մէջ աղէտը կը շարունակուի։

Արդարեւ, Գերմանիոյ մէջ կացութիւնը թեւ սկսած է յարաբերաբար նախորդող օրերուն մեղմանալ, այսուհանդերձ վտանգը կը յամենայ յատկապէս Մակտայուրիկի շրջանին մէջ։ Մարդիկ կը շարունակեն Էլ գետի երկայնքին միջոցառումներ որդեգրել՝ ամրապնդելու համար իրենց «ջրաթումբերը»։ Չորերը շրջանին կարգ մը մասերը թափանցած են արդէն, սակայն ուղղաթիւներով բանակին կողմէ նետուած աւազի տոպրակները կ'ունենան իրենց փրկարար դերը։ Ինչ կը վերաբերի վնասուած վայրերու բնակիչներուն, ապա քա-

ԿԱԶՈՒ ՊԱՅԹՈՒՄ ՄԸ ՑՆՑԵՑ ՄՈՍԿՈՒԱՆ

Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի հիւսիսարեւելեան շրջանին մէջ երէկ գիշեր փեղի ունեցաւ զօրաւոր դայթումը, որուն հետեւանքով ամբողջովին փոյլ եկաւ հսկայական շէնք մը։ Առաջին առիթով, շապտուկի միջոցով ուղղուեցաւ խափանարարական արարքի հաւանականութեան, սակայն անմիջապէս ի յայտ եկաւ, որ դայթումը հետեւանք է կազմի «փախուստ»ի։ Թէեւ դայթումական ոչ մէկ փութեալ գոյութիւն ունէր գոհերու կամ վիրաւորներու մասին, սակայն ակնհայտ էր սպառնալիքները։

Մամլոյ հրապարակած լուրերուն համաձայն արմատական - պահպանողական շարժումներ պետութեան կը պահանջեն արտակարգ իրաւասութիւն առկայելու համար քաղաքացիական իրաւունքները եւ հալածելու բարեկարգչականները, որոնք Վորապիզ կը կանգնին Միացեալ Նահանգներուն հետ աւելի լաւ կապեր ունենալու տեսակէտին։

ՉԻՆԱՍՏԱՆ ՓՈՔՐ ՔԱՅԼԵՐ ԱՌԱՍԵ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՄԱՐԶԻ ԲԱՐԵԼԱԽՄԱՆ ԳԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

ՊԵՅՃԻՆԿ, 20 (ՌՈՅԹԸՐԶ)։- ՄԱԿի մարդկային իրաւանց յանձնակատար Մէյրի Ռոպինսըն Երեքշաբթի օր ըսաւ, որ Չինաստան փոքր քայլեր առած է մարդկային իրաւանց մարդի բարելաման ճամբուն վրայ, սակայն Պեյճինկ տակաւին երկար ճամբայ ունի կտրելիք, աւելցուց Ռոպինսըն, որ վերջին անգամ ըլլալով Չինաստան կ'այցելէ, իբրեւ ՄԱԿի յանձնակատար։

Ռոպինսըն, որ հինգ տարիէ ի վեր կը վարէ մարդկային իրաւանց յանձնակատարի պաշտօնը, եօթը անգամ Չինաստան այցելած է։ Ան ըսաւ, որ իր գրասենեակին եւ Պեյճինկի միջեւ թեքնիք գործակցութիւնը օժանդակած է փոքր բարեկարգումներու մարդկային իրաւանց մարդի մէջ, որ սակայն կը մնայ մտահոգիչ, որովհետեւ խախտումներ կը շարունակուին, այլախոհներ կը հալածուին, մահապատիժ ընդհանրացած երեւոյթ է, թիպթոցներ փոքրամասնութիւն դարձած են իրենց մայրաքաղաքին մէջ եւ շարք մը այլ երեւոյթներ, որոնք պէտք է սրբագրուին։

ԹՄՐԵՑՈՒՑԻՉԻ ՓԱՔԻՍՏԱՆՑԻ ՄԱՔՍԱՆԵՆԳ ՍԸ ԳԼԽԱՏՈՒԵՑԱԻ

ՌԻԱՏ, 20 (ՌՈՅԹԸՐԶ)։- Մէլուրական Արաբիոյ մէջ Երեքշաբթի օր գլխաւորեցաւ փաթիւփակման մը, որ մահուան դատաւարութեամբ էր հետոյին մաքսանեցած ըլլալու համար, յայտնեց ներքին գործոց նախարարութիւնը։

Նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ գլխաւորմը փեղի ունեցած է մայրաքաղաք Ռիադի մէջ։ Փաթիւփակման ամբաստանագրութիւն գլխաւորմով երեսուցի կը բարձրանայ այս փարտան ընթացքին Մէլուրական Արաբիոյ մէջ մահապատիժի ենթարկուողներուն թիւը։ Անցեալ փարի 75 հոգի մահապատիժի ենթարկուած էր, իսկ նախանցեալ փարի՝ 121 հոգի։

ՓԱՆՔԻՍԻ ԿԻՐՃԻՆ ՄԵՋ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԶԵՆԱՐԿԵԼՈՎ՝ ԹԻՖԼԻՍ ԿԸ ՓՈՐՁԷ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՅԵՏ ԿԱՊԵՐԸ ԲԱՐԵԼԱԽԵԼ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնածէ յարձակողականի մը ձեռնարկած է Փանքիսի կիրճին աւազակախումբերուն դէմ։ Շեւարտնածէ ըսաւ, որ գործողութիւնը պէտք է նպաստէ Ռուսիոյ հետ կապերու բարելաման։

Մոսկուա միշտ ալ քննադատած է Թիֆլիսը, որովհետեւ անիկա չի սանձեր ըմբոստ ուժերը, որոնք Փանքիսի կիրճը կ'օգտագործեն յարձակումներ գործելու համար դէպի Չեչենիա։ Ռուսիա Վրաստանէ կը պահանջէ արտօնել ռուս կինուրներու ներկայութիւնը յիշեալ կիրճին մէջ, սակայն Թիֆլիս կը մերժէ։ «Վրաստան կարող է կարգն ու կանոնը վերահաստատելու Փանքիսի կիրճին մէջ» յայտարարեց Շեւարտնածէ։ Ան չըսաւ սակայն, թէ ներքին գործոց նախարարութեան ուժերը ե՞րբ պիտի ուղղուին դէպի կիրճը։

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ...

Շարունակուած 3րդ էջէն

թեան կարելիութիւնները ուսումնասիրելու համար։

Թերթը նաեւ գրած է, թէ դեսպաններու նշանակման թրթածարը հանդարտ մթնոլորտի մէջ կը պատրաստուի։ Գարդ հիմնական դժուարութիւնը կը կայանայ Ռաշիսկիթընի եւ Փարիսի դեսպաններու ճշդումին մէջ։

«Տիպը» նշած է, թէ նախագահ Լախուր Ուրբաթ օր Պեյթեմիսի նախագահական ապարանք պիտի բարձրանայ, իսկ Սեպտեմբերի սկիզբը Մեթիլ շրջանին մէջ բարգաւաճման ծրագիրներու հիմը պիտի դնէ։ Ըստ թերթին, ան պատրաստակամութիւն կը յայտնէ իր վաւերացումը ապագային երկխօսութեան հողովոյթը՝ բոլոր կողմերէ վեր մնալով։

«Անուար» գրած է, թէ հանրային փոխադրութեան պաշտօնեաները բաց գործընդլի պիտի դնեն. անոնց պահանջներուն մաս կը կապուի շուրջ 9 միլիոն քառ. մետր տարածութեամբ պետական հողամասերու վերադարձը փոխադրութեան ընկերութեան։

«Քիֆաի Արապի» գրած է, թէ Պեյթեմիսի մէջ գումարները ֆրանսախօս երկիրներու համագումարին 32 նախագահներու մասնակցութիւնը ցարդ յստակացած է։

Panasonic

Happy Memories now come with a GIFT!

\$545*

FREE Package Worth \$48

+ 4 Lottery Tickets of "Win With Us" L.L. 70,000,000 Summer 2002 Campaign

Brighten-up your Summer with the sights & sounds of Panasonic

This offer is valid till September 8, 2002, on the model NV-VZ75 only.

For more info, contact: Tutunjan Corp. S.A. (04)712129/130, 711967 (03)243203 Fax: (04)712177 e-mail: TTC@cyberia.net.lb